



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ. 1884 տարին ի վասպուրական	ՇԱՀԻՆ
ԿՐԹԱԿԱՆ. Հիմնական տարերը դաստիարակութեան (Եզրակացութիւն ԺԻՒԼ ԲԱՌՕՋԻ Ի «Մանկավարժութեան տիեզերական պատմութեան» Թարգմանութիւն	ՎԱՀԱՆ Մ. ԷՍԱԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ. Բապտիստ (ԷֆթՈՐ ՄԱԼՈՅ) Շար. և վերջ	
ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ. Առ դիւղացի եղբարս	ՀՈՂԱԳՈՐԾ
ՋԱՆԱԶԱՆՔ. Երկու ժամ Մաղասի բանտին մէջ (ՖԻԿԱՐՕ) Շար. և վերջ	
ՔԱՂՈՒԱԾ ՄԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաբէն, Ներքին, Ազգային	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ.	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ զաւառներու — տարեկան	Կէս Օսման. ոսկի
» » վեցամսեայ	Քառ » »
Մէկ թերթին զինն է	60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան	12 ֆրանք
» » վեցամսեայ	6 »
Թղթատարութեան ծախք տարեկան	Դան. արծ. 15
Վեցամսեայ	» » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորասուրենկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԼՐԱԳՐՈՅ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱՒԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 48 Յունվար

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս Լնտրայի վրայ (պանքայի)	440	3/8
3 » » » (վճռվելն)	440	
3 » Բարի / ի » (պանքայի)	22	85
» » » (վճռվելն)	22	32 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Բոնսոյիտէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ	դհկն	8 36
Պորային գոցուեցէն վերջը	»	8 36
Բերայի մէջ	»	—
Առաւօտուն բացուեցաւ	»	8 39
Բարձրագոյն գին	»	8 39 1/2
Նուազագոյն	»	8 39
Կէս օրին	»	8 39 1/2
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.)	74	47 1/2
Երեկ երեկուն գոցուեցաւ	74	47 1/2
Բերայի մէջ	—	
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	74	35
Կէս օրին	74	30
Հէվալէսիզ	45	
Բէքօր գոնսոյիտէի	—	
» Իւնիֆիէի	—	
Փոխառութիւն 4863	Ֆր.	74
» 4865	»	57
» 4869	»	50
» 4873	»	44
Պոն տիւ Թրէզօր	Անգլ. Լ.բ.	21
Բուժէլի երկաթուղի	Ֆր.	45 75
Օպիկասիոն տը Բրիօրիթ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	70

ԲԱԺՆԵՏՈՐՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ	(Գ. Կ.) Անգլ. Լ.բ.	3 45
Քրէտի Ժէնէրալ	» » Օսմն. Լ.բ.	6 30
Պանք տը Գոնս	» » »	5 05
Սօս. Շանթ է վալէօր	» » Օսմն. Լ.բ.	3 20
Թրամուէյ	» » »	265

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր2.	400
20 Ֆրանկոն	»	87 29
Անգլիական ոսկի	»	440 25
Բօլ Խմբէրիալ	»	90 40
Քրիմից	»	54 45
Ռուսկի Թղթադրամ	»	8 53
» արծաթ	»	89 40
Ֆիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 3

Վ. Եցնոց	»	102 35
Հինգնոց	»	102 35
Մէթալիք	»	99
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3200

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լնտուն, 28 Յունվար Ժամ 5 վայր. 45 երեկոյ		
Անգլ. քօնսոյիտէ գոցուեցաւ	99	15 1/6
Օսմն. բացուեցաւ	45	7/8
» » գոցուեցաւ	45	7/8
Օսմն. փոխառութիւն 4865	41	1/8
» » 4869	9	7/8
» » 4871	70	5/4
» » 4872	49	
» » 4873	8	5/8
Փոխառութիւն 4877	83	5/4
Պանք Օթօման	43	5/4
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	96	5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	66	7/8
» առանձն. (բրիվիլէթիէ)	89	
Տայրա Սանիէ	64	5/4
Տօմանիալ (փոխառ. Բօլիլտ)	88	
Հունգարական պարտաթուղթ 4877	—	
Փոխառութիւն Բարիզի վրայ		
Վ. Իէննա, 28 Յունվար Ժամ 40 վ. 30 երեկոյ		
Փոխառութիւն Լնտունի վրայ	424	40
Օսմանեան երկաթուղի	22	
Բարիզ, 28 Յունվար Ժամ 3 վայր. 45 երեկոյ		
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109	95
» » 3 0/0	79	87 1/2
Օսմանեան քօնսոյիտէ բացուեցաւ	46	07 1/2
» » գոցու. (գ. Կ.)	46	45
» » 4865	56	
» » 4869	50	
» » 4873	44	
Օսմանեան երկաթուղի	45	
» Բէժի բաժնեթուղթ	—	
Պանք Օթօման	596	25
Գրէտի Լիօնէ	537	50
» Յօնիէ (գ. Կ.)	1318	75
Բաժնեատման Լիօնի (գոլ. կոր.)	1265	
Սուէզի ջրանցք	1863	75
Ռուսական 5 0/0 4877ի (գ. Կ.)	99	1/2
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97	60
Եգիպտական միացեալ գոց	337	50
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	60	1/2
Բրիօրիթ Թիւրք	405	
5 0/0 Հիլլէնական (գ. Կ.)	—	
2էք Լնտրայի վրայ	25	32

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Յունվար 27 Ժ. 40, վ. 45		
Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	440	
Օսմանեան »	46	25
Եգիպտական միացեալ	339	37 1/2

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

347 ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆՈՒՍՐ 19

ԹԻԻ 3753

ԱԶԳԱՅԻՆ

1884 ՏԱՐԻՆ Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վան, 1 յունվար, 1885

Այսօր կը թեւակոխենք նոր տարեշրջանի մը մէջ, մեր ետեւը թողլով 1884 տարին: Բնական է որ նոր սկսուող մէն մի տարեշրջանի սկիզբը յետադարձ ակնարկ մը ձգեն մարդիկ իրենց վերջացող տարւոյ գործառնութեանց, իսկ ազգերը իրենց նախորդ կենաց վրայ: Եւ մինչ վաճառականն այսօր աչքէ կ'անցունէ իւր վաճառատան հաշուեկշիռը, գործակատարն յանձնարարողաց կը ներկայացնէ իւր հաշիւը, լրագրութիւնն ալ յետադարձ ակնարկ մը կը ձգէ ազգային կենաց զանազան երեւոյթներուն վրայ, որք ի յայտ եկան վերջացող տարւոյ շրջանին մէջ. կը ներկայացնէ ազգին ըրած քայլերը դէպի յետ կամ յառաջ և կը փակէ նախորդ տարւոյ հաշուեցոյցը: Մեր եւս, իբրեւ յետին աշխատակից հայ մամլոյն, կուգանք ներկայացնել մեր գաւառի 1884 ի հաշիւը, մեր քաղաքական և ազգային վիճակը, տնտեսական և կրթական քայլերը, յուսալով զիւրութիւն մը մատուցանել 1884 ի տարեկան ընդհանուր տեսութիւնը խմբագրող անձին:

1884 տարին մեզ համար եղաւ հանդարտ և անշարժ տարի մը. ո՛չ մի քայլ դէպ յառաջ չկատարուեցաւ այդ տարւոյն մէջ. այս պատճառաւ կը կարծենք որ վերջացող տարին մեր գաւառի տարեգրութեանց մէջ երբէք յիշատակելի դեր մը չթողուր բացի քաղաքական վիճակէն, որ նշանակելի փոփո-

խութիւն մը կրեց նախորդ տարւոյն մէջ փոփոխմամբ կառավարութեան գրեթէ բոլոր նահանգական պաշտօնէից: Տարւոյս առաջին քառորդին մէջ ընդունուեցաւ նախորդ կուսակալ Վսեմ Հասան փաշայի հրաժարականը, որ եօթնամեայ պաշտօնավարութիւն մը ռնկեցած է: Նմա յաջորդեց այժմեան կուսակալ Վսեմ Համիտ փաշայն, որ անշուշտ պիտի շարունակէ իւր նախորդի ուղղութիւնը:

Բացի այս պաշտօնական փոփոխութենէն, աւելորդ է ասել որ մեր քաղաքական վիճակն ալ հանդարտ եղաւ: Ո՛չ մի արտասովոր դէպք չեկաւ վտանգել երկրի խաղաղութիւնը, որ իւրաքանչիւր տարի հետզհետէ առաւել կ'ամրապնդէ: Երկրի ապահովութիւնն ալ այժմ առաւել գոհացուցիչ վիճակի մէջ է. քիւրտ հրոսակների մ'այժմ այնչափ դժուար է գիւղերու վրայ յարձակելով խանդարել երկրի խաղաղ հոգաբարձի անդորրութիւնը, որչափ հատարակ չաւրագործի մը վտանգել քաղաքացւոյ հանգիստը: Այս գոհացուցիչ վիճակը վերագրելի է որպէս կայսեր, կառավարութեան հետեւած ուղիւ աշխարհավարութեան եւ չորագործաց դէմ ցոյց տուած խիստ ընթացից, նոյնպէս ալ ժողովուրդին մէջ ինքնապաշտպանութեան բնազդի զարգացման: Տարակոյս չկայ որ ներկայ անդորր կացութիւնը կը զօրացնէ ժողովուրդի հաւատը երկրի ապագային վրայ և առաւել եւս կ'ամրապնդէ նորա հաւատարմական պահանջները:

Եթէ երկրին մէջ կենային տնտեսական զարգացման նպատակաւ միջոցներ, հազոր գակցութեան յարմար ուղիներ, ամբողջ այս հանդարտ և ապահով քաղաքական վիճակն

անշուշտ կարող էր մեծ զարկ մը տալ նաև երկրի փոփոխական զարգացման : Բայց դժբաղդաբար մեր դաւառի տարեկան տեսութիւնն դրողն, իւրաքանչիւր տարեշրջանի սկիզբը անկարող է նշանակել երկրի արած յառաջագիմութիւնը այդ կողմանէ : Երկար տարիներէ ի վեր շարունակուող այս տխուր վիճակը այնքան արագ յառաջագիմած եւ այնպիսի կացութեան մ'առաջնորդած է երկիրը, զոր ոչ եւս կարելի է քօղել : Երկրի բնիկ արհեստագործութիւնը գրեթէ կատարելապէս տեղի տուած են եւրոպական ճարտարութեան, մանաւանդ տարագործութեան առաջ . զրամը արտասովոր համեմատութեամբ կը դիմէ դէպի ծտար հրապարակները, մեր խեղճ վաճառականաց ձեռքը, ոտքը կաշկանդելով որք ապրանքին ապստիկ ծախելու ստիպուած, անկարող կը լինին Կ. Պոլսոյ վաճառատանց ունեցած սլարաքերին հատուցանելու, և հազուադիւս չեն վանցի վաճառականք, որք առաւել կամ նուազ քանակութեամբ պարտքով գաղտագողի կը դիմեն հայրենիքը, ըստիպելով Կ. Պոլսոյ վաճառատանը կէս առ կէս և մերթ առաւել զեղջեալ դումարով մը փակել իւր հաշիւը : Վարկը կը նուազի անվտանգութեան պատճառաւ, տոկոսի սակը անհաւատալի գիներու կը հասնի, եւրոպական արտադրութիւնը աճեցուն քանակութեամբ կը յորդեն երկրիս մէջ, օժանդակ ունենալով իրենց ճաշակի աղնուացում մը, որ տեղական կոչող, բայց հաստ չէին կը նախընտրէ գեղեցիկ, բայց փոած պաճան, որ ոչ եւս մեղր կը գործածէ փոխանակ չաքարի, որ բնիկ օղիին և դինւոյն հետ սովորած է նաեւ դարեջուրը և ուրիշ եւրոպական ըմպելիները : Թող բան չունի Ս. Հայրիկը շրջի եկեղեցիները և իւր յատուկ պերճախօսութեամբ ուշադրութիւն հրաւիրէ այն կործանարար կացութեան վրայ, որոյ ալետալի վախճանը դժուար չէ երեւակայել : Սկսող տարւոյ ընթացքին մէջ առիթ պիտի ունենանք երկարօրէն գրելու այս մասին :

Վերջացող տարւոյ ազդեցին վիճակին ալ եղաւ նոյնչափ հանդարտ, որչափ ապարդիւն . միայն թէ կը փափաքէինք որ այս հանդարտութիւնը չնմաներ այն խաբուսիկ հանդարտութեան, որ սովորաբար կը տիրէ

փոթորիկէն առաջ : Պօղոս Սրբազանի տաճն և հինգ ամսեայ պաշտօնավարութիւնը, յորմէ շատերը թերեւս մեծ բաներ կ'ակնկալէին, խաբուսիկ միայն եղաւ : Ոչ մի արժանաւոր գործ չգրուեց Ն. Սրբազնութեան և իւր նախագահած Վարչութեան ուշադրութիւնը, որը ընդհակառակն չափէն աւելի զբաղեցան անկարեւոր խնդիրներով : Նախկին ընթացքի մը, որոյ պատճառաւ խռովութիւնք չեն մոռցուած, վերագարծը սկսած է արդէն պատրաստուիլ, Վարչութեան ժողովոյ պաշտօնավարութեան չըջանը երկար ժամանակէ ի վեր աւարտած է և Տեղապահ Սրբազանը փոթ չըներ Գաւառ. Ժողով դումարելու նոր ժողովոյ ընտրութեան համար, պատճառելով որ ինքը Կեդր. Վարչութեան Գաւառ. Ժողով դումարելու հրահանգ չունի . մինչդեռ աւելի ճշմարիտ կը լինէր ասել որ կը վախնայ թէ մի դուցէ Գաւառ. Ժողովը հակառակորդ տարերքներէ խորհրդականներ բոլորէ իւր շուրջը : Մինչեւ անգամ մեզ կը հաւաստեն թէ Ն. Սրբազնութիւնը դրած է ի Պատրիարքարան որ Գաւառ. Ժողովը կազմալուծեալ է և Վարչութեան այժմեան ժողովոյ վերահաստատութիւնը խնդրած է : Եթէ ստույգ է այս լուրը, ալեք է ասել որ Գեր. Տեղապահը ձեռնարկած է այնպիսի վտանգաւոր խաղի մ'որ կարող է փութացնել փոթորիկ :

Ուրիշ նկատմամբ ազգային վիճակը ունեցաւ բաւական մխիթարական կողմեր : Սրբաբնի մեծ եկեղեցւոյ վերադինութիւնը, որ սկսեցաւ վերջացող տարւոյ երկրորդ քառորդին մէջ և մօտ է աւարտելու, միանգամ եւս ի վեր հանեց հայ ժողովուրդի կըրօնական զարմանալի ջերմեանդութիւնը : Կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն առթիւ հայ ժողովուրդի և երիտասարդութեան ցոյց տուած եռանդը տարւոյն երկրորդ և վերջին քառորդին մէջ, որ տարապարտ մեկնութեանց տեղի տուաւ, ի վեր հանեց զգացում մը, զոր հայ ժողովուրդը կը տածէ դէպի Սրբաբանեան Մայր-Աթոռը, ցոյց տուաւ որ դաւառացի Հայք եւս անտարբեր չեն դէպի Ս. Էջմիածին և դէպի այն կենսական շահերը, զորս կը յանձնենք ապագայ Կաթողիկոսին : Եւ վտանգ ենք որ կը ներուկն մեզ եթէ մեր բուռն եռանդը և ընտրութեան մէջ մեր ուղղակի մասնակ-

ցութեան զլացումը առաջնորդեցին մեզ այնպիսի միջոցներու, որք թերեւս ուրիշներու ծայրայեղ երեւին: Ազգային այս միաթարական կողմերը, միացած քանի մը պատուաբեր ցոյցերու հետ, որք եղան նշանաւոր հայ դրագէտի մը և հայ բարերարի մը, ի վեր կը հանեն լաւագոյն տրամադրութիւն մը ժողովուրդին մէջ, որ անշուշտ առաւել օգտակար պիտի լինէր ազգային վիճակի համար, եթէ նորա ղեկը գտնուէր բարձր գաղափարաց ծանօթ և ժամանակի պահանջմանց յարմար ղեկավարի մը ձեռաց մէջ:

Այսպիսի ղեկավարի մը բացակայութիւնը ամենէն աւելի կ'ազդէ մեր գաւառի կրթական վիճակին վրայ, որ աւելորդ է ասել չատ տխուր եղաւ նախորդ տարւոյն մէջ: Մեր ծխական վարժարանները, միակ բացառութեամբ, ողբալի վիճակի մը վերածեցան. նախորդ բազմաթիւ ընկերութիւններէ մնացած միակ ընկերութիւնն եւս, «Խնամատար», կազմալուծեցաւ, իւր Որբանոցի բոլոր հոգը բեռցնելով տեսչին կրօնակը, որ թէեւ աջադուրկ մի անձ, բայց հաստատամտութեամբ կը կրէ իւր բեռը, ընկճուած նորա ծանրութեան ներքեւ, անշուշտ ի նախատինս իւր երկու աչք ունեցող ընկերակցաց, որք փոխանակ խնամելու իրենց աջադուրկ ընկերը, 15-20 որբերու ահագին բեռն ալ դրած են նորա կրօնակը: Ոչ ոք կարող է ուրանալ Առաջնորդի անձնական ազդեցութիւնը կրթութեան գործին մէջ, որ սակայն կ'առարեալ բացակայութեամբ փայլեցաւ նախորդ տարին, և անշուշտ չէինք կարող աւելի գործ սպասել մի մարդէ, որ անձնապէս բարեկամ չէ կրթութեան:

Առաւել յուսահատեցուցիչ կը լինէր ի մեզ դատարարակութեան գործը, եթէ չունենար ինչ ինչ միաթարական կողմեր: «Կեդրոնական» վարժարանը նախորդ տարին ունեցաւ յուսալի վիճակ մը: Ինչ որ ալ ասեն Պ. Փորթուգալեանի թշնամիները, չեն կարող սակայն ուրանալ այդ պատուական երիտասարդի մատուցած թանկադին ծառայութիւնները մեր կրթական գործին: Կեդր. վարժարանի աշակերտք արդէն կարեւոր տեղ մը գրաւած են քաղաքիս ուսուցչական մարմնոյն մէջ, ծխական վարժարանաց տա-

լով նոր եւ մինչեւ հիմա եղածէն տարբեր ուղղութիւն մը: Կեդր. վարժարանը միշտ օրինակելի տիպար մ'է միւս վարժարանաց համար: Նորա աշակերտք առաջին անգամ մեր վարժարանաց մէջ մտցուցին բնական և չափական գիտութիւնները, մարմնամարդ եւայլն, որք անոնցմէ առաջ անծանօթ էին: Այն գործը, զոր Պ. Փորթուգալեան և իւր աշակերտք կը կատարեն քաղաքին մէջ, նոյնը կ'անեն գիւղերու մէջ Վարադի վարժարանի աշակերտք, որք ցրուած չըջակայ բազմաթիւ գիւղօրէից մէջ, կ'ուսուցանեն զոր ինչ ուսած են: Ահա այս է միակ միաթարական կողմն, զոր կը ներկայացընէր ի մեզ կրթական գործն վերջացող տարւոյն մէջ:

Մաղթենք որ յառաջիկայ տարին, յորում այսօր թեւակոխեցինք, մեր ազգային և կրթական վիճակին համար առաւել արդիւնաւոր լինի. մաղթենք որ բաղդաւոր տարի մը լինի մեզ համար 1885 տարին:

ՇԱՀԷՆ

Կ Ի Թ Ա Կ Ա Ն

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՍՐԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(ԱՌ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ)

Եղբակացութիւն Ժիւլ Բառօզի « Մանկավարժութեան արեւելեական պատմութեան »

Ա.

Բացարձակ և հեթանոսական աստուածապետութեանց գերիշխանութեանը տակ, տեսանք թէ հին ժողովուրդները, Չինները, Հնդիկները, Պարսիկները և Եգիպտացիները, մարդը բռնի կը մտցունէին սահմանեալ դրութեան մը մէջ և ասով կ'արտադրէին անշարժութիւն և բնական և բարոյական սարկութիւն: Յունաց և Հռոմայեցւոց մէջ, գտանք մշակութիւն մը մարդկային կարծրեւած, այսինքն մարդուն և իւր պիտոյից յարմարցուած: Բայց սոսկ մարդկային մշակութիւն մը անկարելութիւն մ'է. նա իս-

տակութեան նիւթական և հեթանոսական սկզբունքը, զոր եկեղեցին տապալած էր, վերստացաւ իւր գերիշխանութիւն։ Այսպէս եղաւ ամբողջ միջին դարու մէջ, և դպրոցականութեան երկայթէ շրջանակին մէջ ամբողջութեան Գրիստոնէութիւնն հին աստուածաբանութեանց անշարժութեանը մէջ պիտի մոնէր նորէն, երբ վերածնութիւնը, վերանորոգումը և խնայողականութիւնը եկան խորտակել դպրոցականութեան և նիւթական հնազանդութեան շղթայները։ Սակայն ազատ և կամաւոր հնազանդութեան սկզբունքը ամենուրեք չը վերահաստատուեցաւ իւր նախկին պայմաններով։ Ունեւոր տկարացումը անգամաւորութեան սկզբունքը կամ շարունակեցին ուրանալ զայն ուրիշներ չափազանցութեան տարին և զայն․ լաւ եւս հաստատուելու համար յարձակեցան հաւատի և կրօնի դէմ և մինչեւ իսկ սա սկզբունքը քարոզեցին թէ մարդ լոյ իրմէ կախում ունի․ անմիտ հպարտութիւն, ում կը յաջորդեն միշտ անբարոյականութիւն եւ անիշխանութիւն։ Մարդս կարող չ'է ապրիլ այն սկզբունքէն դուրս ուստի կը բղխի։ Աստուծոյ դուրսնա կը նմանի ձիւղի մը որ անջատուած լինի իրեն ծնունդ տուող ծառէն․ զայս ըմբռնած են աշխարհի բոլոր ժողովուրդներն, գէթ բնազդով, և կամովին հպատակած են գերագոյն սկզբան մը։ Մեր օրով քրիստոնէական սկզբունքը մեծ յառաջդիմութիւններ ըրած է․ սակայն գեղեցիկ կարող ըսել թէ յաղթանակած է։ Խղճի ազատութիւնը շատ սահմանադրութեանց մէջ հոգակուած է և յաւէտ կամ նուազ անկեղծապէս յարգուած։

Միացեալ-Նահանգներն և Անգլիա այն երկիրներն են ուր այս ազատութիւնը ամենէն աւելի համարձակօրէն ճանաչուած է և իրագործուած դպրոցի շրջափակին մէջ։ Եւրոպայի ցամաքին վրայ, պետութիւնները դեռ ստէպ չարաչար կը գործածեն իւրեանց հեղինակութիւնը։ Յաւալի ձկնորս մ'է այս, որովհետեւ դպրոցը լոյ այն ատեն պիտի կարենայ իւր բնական վիճակովը դուրս ելլել երբ պետութիւնը հրաժարի խիղճներուն վրայ ու եւ է՝ ճնշում բանեցունելէ, ազատ ասպարէզ թողու մասնաւորաց, ընտանեաց և Եկեղեցւոյ ներգործութեանն հաւատքի գործերուն մէջ, և ամեն շրջա-

նակի մէջ խոստովուի ամեն տեսակ ստիպումէ և բռնաբարութենէ։ Ներդրածութիւններն օրինաւոր են, հարկաւոր են նոքա․ բայց ստիպումն, բայց բռնաբարութիւնն ամենուրեք անտեղի է երբ խնդիրն այն սիրոյ կապին վրայ է զոր Յիսուս-Քրիստոս եկած է հաստատել Աստուծոյ և մարդոց միջեւ։ Ուրեմն մաղթենք որ շուտ հասնի այն ժամանակն ուր մարդ իկ պիտի յարգեն միանգամայն թէ՛ խղճի ազատութիւնը և թէ՛ կրօնի վսեմ ճշմարտութիւնները։

Ե.

Քանի որ իրաց վիճակը գրեթէ այսպէս է այժմ, դատարարական արդի գործը ինչ պէտք է որ լինի։ Այս կէտին վրայ պիտի փորձեմ անհիտիւ պատմութեան դասերը, համախմբելով զ'անոնք դատարարական չորս հիմնական տարրերուն շուրջը, որք են ճանաչել, զայն զարգացնելու կարող արարչայնէն, որոշիչէն և դատարարիչէն։

Զ.

Մանուկը տկարութեան այնպիսի վիճակով մը կը ծնի որ պիտի կորչէր եթէ ինք իրեն թողուէր։ Զայն մեծցնելու հարկը պարտաւորիչ կը լինի այն խնամքներով զորս կը պահանջէ։ Բոլորովին ժխտական դատարարականութիւն մը, ինչպէս կը պահանջէր Ռուսո, անկարելութիւն մ'է, և Էփլը իւր սկզբունքին հետ շարունակ հակասութեան մէջ է․ ինչո՞ւ համար Էփլին իւր առաջին օրէն սկսեալ դատարարակ մը տրուած է, եթէ ոչ իւր դրութեան համեմատ դատարարակելու համար զայն։ Բայց մանուկը կըրթ թելու համար, պէտք է ճանաչել իւր բնութիւնը, իւր պէտքերը, իւր յարմարութիւններն, իւր զարգացման օրէնքներն։ Ասոնք հասարակ ճշմարտութիւններ են, և սակայն, մինչեւ Բէսոյ աղօցցիի գալուստն, դատարարականութիւնը բոլորովին կանխակալ դրութեան մը կը հետեւէր և ոչ ոք կը խորհէր մանուկին բնութիւնը ուսումնասիրել, անոր հետ ըստ իւր պիտոյից վարուելու համար։ Այսօր դատարարականութեան մէկ ծանուցեալ վարդապետութիւնն է թէ պէտք է մանուկին կրթել իւր բնութեան համե-

մատ : Դժբախտաբար մանուկը դեռ բաւական ճանաչուած չ'է , և այս տգիտութիւնը ցաւալի սխալմանց տեղի կուտայ : Դիտցըւած է թէ պէտք է միանգամայն զարգացունել բնական վիճակն , մտաւոր կարողութիւններն և բարոյական և կրօնական կարողութիւններն . բայց ո՞վ հիմնովին կը ճանաչէ մանուկին բնական , մտաւոր և բարոյական և կրօնական բնութեան բոլոր պէտքերը : Գեռ այս կէտին վրայ մեծ յառաջդիմութիւններ ունինք ընելու , մանաւանդ հոգեբանական ճիւղին մէջ : Այն բազմութիւ գրութիւններն , զորս բացատրելի այս պատմութեան մէջ , բաւական ցոյց կուտան թէ այս փափուկ խնդիրներուն վրայ վերջին որոշումը տրուած չ'է դեռ : Սակայն բարեքուններ տեղի ունեցած են և մենք կարող ենք յուսալ նորանոր յառաջդիմութիւններ :

Ե.

Պալով մանուկին կարողութիւնները դործադրելու և զարգացնելու յարմար առարկայներուն , ասոնք ուրիշ բան չ'են այլ եթէ իւր պէտքերուն պահանջած և անոնց համապատասխանող բաներն . քնո-լիւն , ծորք և Աստուծոյ : Մանուկն կախում ունենալով բնութենէն , պէտք ունի զայն ճանաչելու , թէ՛ գտնացնելու համար իւր բնական պէտքերը , և թէ՛ զայն իւր կաթինն ենթարկելու համար , ինչպէս որ օդաւար կամ հարկաւոր լինի իրեն : Նիւթական աշխարհի առաջին ուսումնասիրութիւնը պարզ խմացողութիւն մ'է , յետոյ կուգայ աւելի բանաւոր ուսումնասիրութիւն մը : Մանուկն կախում ունի նաեւ ընկերութենէն , ուրեմն պէտք ունի ճանաչել իւր նմաններ և իւր ընկերին հետ վարուելու կերպն : Հոս ալ մարդ կ'սկսի դիտել ինչ որ իւր աչաց կը ներկայանայ կենաց ամենօրեայ յարաբերութեանց մէջ , որմէ յետոյ կրնայ բարձրանալ ընկերութեանց և անոնց պատմական կենաց աւելի խորամուխ ուսումնասիրութեանն : Վերջապէս մանուկն Աստուծոյ կախում ունի և իւր սիրտը կը խնդրէ մի երջանկութիւն զոր երկիրս չ'է կարող ընծայել անոր : Ուրեմն պէտք է իրեն ծանօթացնել այն ուղին որ կը տանի հոգեւոր բարեաց ստացման և զոր կը պահանջեն իւր բնութեան ամենաներքին պէտքերն :

Այդ առարկայներուն ինչ չափով մանուկին տրուելիքը կ'որոշուի պարագայներէն , իւր ճաշակներէն , այն միջավայրէն ուր կ'ապրի , այն պաշտօնէն զոր կը մտադրէ ստանձնել : Դժուար է դնել աստ շատ որոշ սահմաններ : Բէսդալօցցի չ'էր ուղեր որ մարդու մը ծանօթութիւններն այն շրջանակէն անդին անցնին ուր կոչուած է ապրիլ : Բայց այս շրջանակը շարժուն և փոփոխելի է : Դըսրոցը պէտք է որ այնպէս կազմակերպուի որ համապատասխանէ ընկերութեան և անհատներու դանաղան պիտոյից :

Մանուկը զարգացնելու կարող այս առարկայից խնդիրը խորին կերպով միացած է իւր բնութեան ծանօթութեանը հետ : Մարդ կը փոփոխէ դաստիարակութեան առարկայներն իւր պիտոյից վրայ ունեցած դադափարներուն համեմատ : Նա որ կը հաւատայ մարդուն ապականութեանն և վերկութեանն մը հարկաւորութեանն , պիտի ջանայ յայտնել մանուկին իւր թշուառութիւնը և անկէ ազատելու համար Յիսուս-Քրիստոսի դիմելու հարկը , մինչդեռ նա որ մարդուն մէջ կը տեսնէ լոկ տկարութիւններ զորս կրնայ յաղթել իւր յատուկ զօրութեամբ , հալիւ կրօնի վրայ պիտի խօսի անոր : Մեռնողն խի կը փոխուի մանուկին բնութեան ճանաչմանը համեմատ : Այս բընութեան ուսումնասիրութիւնն , զոր Բէսդալօցցի սկսած է , ամենակարեւոր է ուրեմն ուսուցման ճիւղերուն և առարկայներուն , կարգապահութեան և դաստիարակութեան միջոցներուն որոշմանը համար :

Ը.

Դրութիւնը դաստիարակութեան երրորդ տարրն է : Նա այն գործնական կերպն է որով մանուկին դաստիարակութեանը յատկացեալ առարկայներն իւր կարողութեանց տրամադրութեանը տակ կը դրուին : Բէսդալօցցի դարձեալ առաջին մանկավարժն է որ այս խնդրին յարատեւ ուշադրութիւն մը նուիրած և անոր մէկ բանաւոր լուծումը գտած լինի : Այնմաններն էապէս զարգացուցած են իւր մանկավարժութեան այս կէտը , ջանալով ուսուցման նիւթերը համաձայնեցնել մանուկին իմացականութեանը հետ և զանոնք յարմարցունել անոր յամր և յառաջդիմական զարգացմանն : Ճորանացիներ-

ընն, նուազ կուսակից Բէտապալոցցիի, երկար ատեն ջանացած են տղոց յիշողութեանը մէջ դետեղել ծանօթութիւններն, թողլով որ խմացականութիւնը իւրացունէ յիշողութեան մէջ ապաւորուած առարկայներն և ի կիր առնու զանոնք: Անգլիացիներն ալ կը դիմեն յիշողութեան, այլ աշակերտին յատուկ դործունէութեանը հրաւէր կարգալով, խուզարկութեան և խորհրդածութեան ոգին զարթոյցանելով անոր մէջ, զօրացունելով գործօն կարողութիւններն և ոչ լոկ ընդունական կարողութիւններն, ինչպէս կ'ընեն Ալեմաններն և Ֆրանսացիներն: Ահա ինչ որ շատ մեծ արժէք մը կուտայ անոնց դրութեանց, իրենց անկատարութեանց հակառակ: Այս դրութեանց կէտին վրայ, շատ կարեւոր խնդիրներ դեռ գոհացուցիչ լուծման մը կ'սպասեն:

Թ.

Վերջապէս, դաստիարակը դաստիարակութեան չորրորդ տարրն է: Հետզհետէ ուսուցումն կամ դպրոցի կառավարութիւնը կը լինի պաշտօն մը որ կը սովորուի բազմաթիւ վարժապետանոցներու մէջ և կը կատարելագործուի գործադրութեամբ: Բայց դաստիարակներուն միայն չէ յանձնուած մանուկներու դաստիարակութիւնն. ծնողք երիտասարդութեան առաջին և գլխաւոր դաստիարակներն են և դժբախտաբար ցարգ շատերն դեռ դաստիարակութեան մէջ իւրեանց բնական միտման կը հետեւին: Բաղձալի է որ ժողովրդական դրուածներ և հանրային դասախօսութիւններ ծնողաց հանդիման այն լոյս ում պէտք ունին իւրեանց դժուար գործը կատարելու համար: Ուրիշ ամեն բաներու համար, նախապատրաստական աշակերտութիւն պէտք է, և աստ միթէ կարելի է զանց առնուլ զայն: Բայց դաստիարակին պատրաստութիւնը միայն իւր պարտաւորութեանց ուսմանը մէջ չը կայանար. ամեն բանէ յառաջ նա կը պահանջէ այս պարտաւորութեանց գործադրութիւնը և սրբութեամբ Աստուծոյ նուիրուած կեանք մը: Օրինակը անհրաժեշտ է երբ հարկ է զարգացունել բարոյական և կրօնական յատկութիւնները և հաստատել մանուկը բարւոյն գործադրութեանը մէջ: Արդէն մի քանի յառաջդիմութիւններ տեսլի

ունեցած են բարւոյնելու համար դաստիարակն, բայց դեռ շատ աւելի մեծ յառաջդիմութիւններ կը մնան իրագործելու. դաստիարակութիւնն այս կէտին մէջ դեռ նոր սկսած է գործի:

Ժ.

Ինչպէս որ տեսանք, շատ յառաջդիմութիւններ դեռ կը մնան իրագործուելու դաստիարակութեան ասպարէզին մէջ: Նոքա պիտի ձեռք ձգուին

Երբ Աստուծոյ հնազանդութեան սկըզբունքը դերձուի ամեն հարկէ և ստիպում մէ, և բոլոր օրինաւոր ավգեցութիւնները կարենան յառաջ դալ ազատօրէն.

Երբ մանուկին բնութիւնը ճանաչուի իւր բոլոր երեւոյթներուն տակ.

Երբ զայն զարգացնելու համար ընտրուին այն առարկայները որք ամենէն աւելի լաւ կը համապատասխանեն իւր օրինաւոր պէտքերուն, մասնաւորապէս իւր բարոյական և կրօնական պէտքերուն, ընկերութիւնը հաստատութիւններ ունենայ իւր բոլոր իրական պիտոյից համար և ամեն ոք ընդունի իւր կոչման յարմար մշակումը.

Երբ վերջապէս դաստիարակութեան մէջ գործածուին փնտռուած արդիւնքը ստանալու համար յարմարագոյն դրութիւնները և հետեւապէս ծնողք և դասատուք բաւական ձեռնհասութիւն ստանան մանուկներուն քով դաստիարակութեան սուրբ պաշտօնը կատարելու համար:

Ահա այն շաւիղն ընդ որ հարկ է որ քայլենք, ահա այն նպատակն ում պէտք է ձկտիլ: Իցի՛ւ թէ այս պատմութիւնը փոքր ինչ նպաստէ զմեզ անոր մտեցնելու:

Թարգմ. ՎԱՀԱՆ Մ. ԷՍԱԵԱՆ

ՆՈՐԱՎԵՊ

ԲԱՍՏԱԼԻՆ

(Շար: և վերջ)

Հետեւեալ օր, Բասթալին այլ ևս նախընթաց տուր հէք ու լքեալ աղջիկը չէր շարեղէններ, կարկանդակներ նուիրեցին նմա, վերջապէս, արհեստանոցին մէջ սովորական բոլոր հրապուրիչ միջոցներն ի գործ դրին. բայց իւր աչքերը միշտ իմ վրայ յառած էին, եւ ինձ այնպէս կը թուէր թէ անուշ տարութիւն մը անկէ յիս կը թափանցէր: Նախաճաշի ատեն, հակառակ զինքը պաշարող շրջանակին, հակառակ իրեն նուիրուած կարկանդակներուն, դէպ ինձ եկաւ և գրեթէ գոռոզ ծայնով մը.

— Պարոն Մարթէլ, ըսաւ, այսօր աւելորդ հաց չունիք:

Այս պարզ խօսքերը վեր ի վայր յուղեցին զիս, իմ հացս անոր հետ բաժնեցի, և անհնար եղաւ ինձ աւելի բան մ'ուտել: Գալով Բասթալինի, զուարթութեամբ և սիրուն կերպով կուլ կուտար իւր պատառները: Աւատիկ այսպէս են կանայք, սիրելիք իմ Մորիս. երբոր զմեզ սիրեն, ուրախութեամբ կ'ուտեն մեր չոր հացը. երբոր զմեզ չսիրեն, մեր կարկանդակները կը մերժեն. դրայիէն չոր հացի պատառ մը խնդրելու համար:

Բոլոր հոգուովս գրաւուեցայ, և այլ եւս միմիայն Բասթալինի վրայ կը մտածէի. բայց բոլորովին երջանիկ չէի, որովհետեւ չէի գիտեր թէ ինչպէս յայտնեմ սէրս, թէ ի՞նչ կերպով պիտի ընդունէր զայն: Բաց աստի, զնա ընդհուպ կորսնցնելու վախն ունէի, որովհետեւ յաջորդ երկուշաբթի, ինչպէս սովորութիւն էր, ուրիշ օրինակ մը պիտի դար: Յանդգնութեամբ մը, որուն վրայ դեռ մինչեւ այսօր կը զարմանամ, այդ վտանգին առաջն առնուլ միջոցը գտայ. այն էր իմ տանս մէջ իսկ պատկեր մ'սկսիլ, և խնդրել Բասթալինէ որ իմ տունս գայ՝ իբր օրինակ ծառայելու համար:

Յոյժ վեհերոտութեամբ ըրի խնդիրքս, յոյժ պարզութեամբ ալ ընդունեց զայն:

Երբ այս բանս գիտցուեցաւ արհեստա-

նոցին մէջ, ընդհանուր պայթման պէս բան մ'եղաւ: Ամենքը միաբերան ամբաստանեցին զիս թէ ոճիր մը կը գործէի ընդդէմ հանրային բարոյականին, և քանի մ'ընկերներ, որք իմ դիտաւորութիւնս ունէին եւ զորս կանխած էի, յայտարարեցին թէ անարդ ու վատանուն էր միջոցս, այլ, գաղտագողի, խնդրեցին Բասթալինէ որ յաճորդ շարթուն իրենց երթայ:

Մաղկահասակ աղջիկն իմ տունս եկաւ: Կը հասկնաս անշուշտ թէ խնդիրն իբր օրինակ ծառայելու վրայ չէր, կը սիրէի զնա:

Ուստի սկսայ գլուխ մը նկարել, սաւկայն, իրօք, բնաւ չէի աշխատեր և աչքս աւելի օրինակին քան կտաւիս վրայ յառեալ մնացին: Ամեն վայրկեան կանդ կ'առնուի, և ինք կ'ստիպուէր յաշխատութիւն հրաւիրել զիս:

Իւր պատմութիւնը պատմեց ինձ, տըխուր և սարգ պատմութիւն մը: Իւր մայրն, ամուսնէն լքեալ, դերձակի մը տարփուհին եղած էր, որ քիչ ատենէն ծեծած էր երկուքն ալ, մայրն և զինքը: Երբ տասնվեց տարեկան եղած էր, դերձակն ուղած էր Բասթալինը ծախել իւր դրացիներէ միոյն. ուստի փախած և իւր բարեկամութիւններէն միոյն ըով ապաստանած էր, որ իրմէ մեծ էր և երբ օրինակ կը ծառայէր լուսանկարչաց ըով, և որ յաճախ իւր անկողինն ու սենեակն ընծայած էր իրեն՝ երբ ապաւէնի պէտք ունեցած էր: Բայց վերստին ստիպուած էր փախչիլ այլ և այլ պատճառներու համար, զորս ինձ չըսաւ, այլ զորս գիւրաւ կռահեցի իւր շիկնիլը տեսնելով: Այն ատեն էր որ մեր արհեստանոցն եկած էր իբր վերջին ապաստան:

Օրն ի բուն մէկտեղ կը մնայինք՝ միասին կը ճաշէինք, և երեկոյին իւր խուցը կը տանէի, զոր վարձած էր Պլանշ պարսպադրան խաւարամած տան մէջ: Իմ սիրոյս մեծութիւնն յայտն կը յայնար որ կը պաշտպանէր զնա իմ ցանկութեանցս դէմ: Ամեն օր կ'ուզէի խօսիլ, և ամեն օր կը բաժնուէի անկից առանց համարձակելու բան մ'ըսել:

Երբ իւր օրն հասաւ, և սա մտածումն թէ ինձմէ պիտի բաժնուէր և թէ ուրիշներ կ'սպասէին նմա, արութիւն տուաւ ինձ:

Ուստի խօսեցայ : Եւ այդ իրիկունն , ո՛չ ալ յաջորդ իրիկունները , այլ եւս չվերադարձաւ Պլանչ պարսպադուռը և ինձ հետ մընաց . . . :

Բասքալին մանկութիւնն իսկ էր , անկեղծ և ուրախ . ամեն ինչ զարմացում կամ հաճոյք կ'առթէր իրեն : Իմ սենեակս ողորմելի էր . կ'ուզէր կարգի դնել , կոկել մաքրել զայն , և «տանտիկնոջ» դեր խաղաց պզտիկ աղջկան մը նման : Ամենադոյզն իրն անգամ կը հիացնէր զնա . գնդասեղի սոսան մը ա՛յնքան կը շլացնէր զնա որքան դրամատոմն մը կրնայ շլացնել մուրացիկուհի մը , կամ աղամանդակուռ զարդ մը՝ սլարկեշտ կին մը . երբ իրեն բերի իւր առաջին գլխարկը , գլխարկ մը որ տաս ֆրանք կ'արժէր , դուհունակութիւնն ու երախտագիտութիւնն անհուն եղան : Ա՛հ , բարեկամս , ո՛րքան հրապուրիչ էր այդ փոքրիկ գլխարկով , որուն ծաղկեայ պսակը կը խառնուէր իւր խարտեաշ խոպոպներուն հետ :

Մեր սիրակցութենէն ի վեր , այլ եւս արհեստանոցը չէի յաճախեր . հազիւ ժամու մը չափ կ'երթայի անդ , մինչդեռ տակաւին Բասքալին պառկած կը մնար , և անմիջապէս կը վերադառնայի անոր հետ ճաշելու համար մեր անկողնին վրայ :

Երբոր օդն աղէկ լինէր , կը մեկնէինք պտըտիլ Փարիզու շրջակայքը : Շափիլ կամ Մէօտոնի անտառը կ'երթայինք . Բասքալին , փախած եղնիկի մը պէս , կը վազվզէր ու կը ցատկոտէր խոտերուն մէջ . մերթ կը վազէր թիթեռնիկներու ետեւէ , մերթ բարձր տեղեր կը մագլցէր՝ թռչնոց բոյներ գտնելու համար : Դեռ տեսած չէի բնութիւնը . առաջին անգամ լինելով այն ատեն տեսայ զայն , սիրոյս մէջտեղէն , և անկէ ի վեր միշտ պաշտած եմ բնութիւնը : Յաճախ նաեւ , հետիոտն կ'երթայինք մինչեւ Բիւթօ : Կղզւոյն մէջ կը ճանչէի ձկնորս մը և իւր կինը . գետեզերքէն կը կոչէի զանոնք , կուգային զմեզ առնուլ իրենց նաւակով և օրն ողջոյն անոնց հետ կ'անցունէինք : Կարթեր պատրաստած էին Բասքալինի և ինձ համար . և արեգական ճառագայթներէն զերծ , Սէնի մէջ խոնարհած դալարապէզ բարձրաբերձ ուռիներու տակ , կը փորձէինք որսալ . այլ իսկոյն համբերութիւնն իսկ կը հասնէր , թանձր ու կանաչ մարմանդին վրայ

կը նստէինք , ծունդերուս վրայ կուգար , կը գրկէինք զիրար , գողտրիկ ու քաղցրիկ իմն կը խօսակցէինք և նորէն կը գրկէինք զիրար . յետոյ , զրպանէս գիրք մը կը հանէի , և քանի մը էջեր կը կարդայի իրեն : Փոքրիկ դատարարակութիւն մը կուտայի նմա . չէի փափաքէր որ գիտուն լինէր , բայց կը խօսէի անոր սրտի ու մտքի վարպետներուն վրայ . անուշ կերպով կը սովորեցնէի իրեն չքսել սքինքսի աչեր , լուսանի կեցուածքներ , յուշկապարկի ձայն մը . կը սովորեցնէի նաեւ ոտորէները դանակով չը կտըրտել , ինչպէս կ'ընենք պէճքէճ մը կամ կամ հաւու թեւ մը , և կը յաջողէի : Կը հաւաստեմ քեզ թէ շատ զիւրին է ներկել կինը . հաստատուն չէ , բայց անմիջապէս կը վայլի :

Ասիկա տեւեց հինգ ամիս , երջանկութեան հինգ ամիսներ առանց ամպի մը . բայց օր մը , ստակս պարունակող գգրոցս սրտտելով , գրեթէ պարապ դտայ զայն . իմ վերջին հազար ֆրանքներէս միայն մի քանի ոսկի կը մնար : Հինգ ամսուան մէջ , երկուքս այնքան ծախսած էինք որքան միմիայն ես երկու տարուան մէջ : Բաւական անհաճոյ բան մ'էր սա . իմ յանձնապատասանութեանս մէջ , կարծեցի թէ այդ չարիք բնաւ անդարմանելի չէր : Աւա՛ղ , ո՛րքան կը սխալէի : Բաւական բան գիտէի անթուրթ ենէ շմեռնելու համար . ներկելու քանի մը վայտեր և ձուլիչներու փոքրիկ օրինակներ գտայ կէս դնով : Բասքալին ալ ուղեց աշխատիլ . կարել գիտէր քիչ մը , հաբուր կերպով հաքուած էր և կար կարող կնոջ մը քով մտաւ :

Իրիկունները միայն կը տեսնէինք զիրար , և զիւզ երթալու համար կիրակի օրերը միայն ունէինք , բայց դարձեալ երջանիկ էինք , որովհետեւ կը սիրէինք զիրար :

Բասքալինի ամենամեծ մտահոգութիւնն եղած էր միշտ իւր արդուգարդը . բայց , այն օրէն ի վեր ուր այլ եւս չէինք կրնար իւր իղձերը դահացնել , այդ մտահոգութիւնն եւս քան զեւս բուռն եղաւ : Երբ , հիմա , երեկոյին դուրս կ'եննէինք , Բասքալին նորածնութեանց վաճառատանց առջեւ կը կենար միշտ և կը հիւսնար . և առաւօտուն , երբ կը հազուէր , արտունջներ և դէշ զսպուած հառաչանքներ կ'արձակէր .

կը բարկանար իւր շրջազգեստին դէմ որ մաշած էր, իւր գլխարկին դէմ որ հինցած էր. դժգոհութիւն կը յայտնէր մեր հայեւ-
ւոյն համար որ յոյժ վրոք էր. ամբողի մը վրայ ելնելով, մազերը կը յարգարէր և ար-
դուարդը կ'ընէր ա'յնպիսի պչրողութեամբ ու ձեւերով, որք անշուշտ ծիծաղ պիտի պատճառէին ինձ, եթէ չվշտացնէին զիս. որովհետեւ կը տառապէի զայն այսպէս տեսնելով, եւ մանաւանդ չլրնալով գոհա-
ցնել զնա: Աւաղ, անկարելի էր այդ, և արդէն դժուարու քիչ մը բան կը վատը-
կէինք նօթութենէ չմեռնելու շարի: Սա-
կայն, որովհետեւ այդ ցոյցերուն մէջ մի-
միայն իմ ընկերացս դէշ ազդեցութիւնը կը տեսնէի, վախս կը փարատէր և կը մխի-
թարուէի:

Ամիս մը կար որ այդ ձգտումներն ան-
հանգիստ կ'ընէին զիս, երբ յանկարծ դադ-
րեցան. վերստին դուայ իմ առաջուան Բառ-
քալինս, միշտ ծիծաղկոտ, միշտ հանդարտ,
միշտ գոհ: Միանդամայն, նշմարեցի որ իւր
արդուարդն աւելի պատշաճ էր: Շրջա-
զգեստ մը զնեց, և ըստ որում զարմացում
կը յայտնէի, բացատրեց թէ իւր յառաջդի-
մութեանց, մանաւանդ իւր դործունէութեան
չնորհիւ աւելի կը վատկէր:

Վստահութիւն ունէի, հաւատացի:

Շաբաթ օր մը, այս խօսակցութենէն
կարծեմ երեք շաբաթ յետոյ, սովորականէն
աւելի քաղցրութեամբ բաժնուեցաւ ինձմէ,
քանի մ'անգամ ողջագուրեց զիս, վերադար-
ձաւ վերստին ողջագուրելու համար, ըսաւ
որ անհանգիստ չլինիմ եթէ երեկոյին չվերա-
դառնար, և թէ շատ աշխատութիւն ունե-
նալով թերեւս գիշերն ալ իւր տիրուհոյն
քով անցունէր, ինչպէս արդէն պատահած
էր մէկ քանի անգամ: Ամենադոյզն կաս-
կած մ'անգամ չունեցայ. գիտէի թէ կի-
րակի առաւօտ կանուխ պիտի դար:

Ամբողջ կիրակին անցաւ առանց Բառ-
քալինի երեւման: Այլ եւս չկրնալով համ-
բերել, երեկոյին դնացի իւր վաճառատունը:
Գոց էր: Ուր դնացած էր արդեօք: Սոս-
կալի գիշեր մը անցուցի: Հետեւեալ առա-
ւօտ, ժամ վեցին, նորէն վաճառատուն
գնացի. ժամ ութին միայն կրցայ խօսիլ
տիրուհոյն հետ: Ամէս մը ի վեր, Բառքա-
լին իւր քով չէր աշխատեր, և դործաւո-

րուհիներէն ոչ ոք գիտէր թէ ինչ եղած էր
նա:

Տուն դարձայ. ինձ այնպէս կը թուէր
թէ գլուխը ճաթած էր և բանականութիւ-
նը կը թուէր կ'երթար: Ոչ ոք դուայ սեն-
եակս: Մեքենաբար քայլերս դէպ ար-
հեստանոց ուղղեցի. տեղս նստայ, երան-
գամանս բացի, վրձիններս առի. յետոյ,
երբոր ուղեցի աշխատելու սկսիլ, ճիշ մը
արձակեցի և կրնակիս վրայ գետին ինկայ
զդայազրիկ:

Վերջէն իմացայ թէ տունս տարած էին
զիս և երեք օր անդ մնացած էի զառան-
ցանաց մէջ:

Նրբ խելքս գլուխս եկաւ, Չթութեան
Հիւանդանոցին մեծ սրահներէն միոյն մէջ կը
դտնուէի: Ուղեղային տենդ մ'ունէի. քառ-
սուն և հինգ օր մնացի անդ:

Վերջապէս, կրցայ տունս վերադառ-
նալ. մարմնով բժշկուած էի, այլ սի'րտս...

Տակաւ առ տակաւ սկսայ աշխատիլ,
բայց այլեւս առաջուան տղան չէի: Նրջան-
կութեան հետ անհետացած էր նաեւ ան-
բըծութիւն, բարութիւն, պարկեշտութիւն.
մարդ մ'եղած էի:

Առաջին հոգս եղած էր Բասքալինը փըն-
տուել, բայց չէի կրցած տեղեկութիւն մը
առնուլ իւր վրայ: Այն ատեն, դժնդակ
վշտի մը մէջ ինկած է որ կամաց կամաց կէս
ապուշ դարձուցած էր զիս և բոլորովին
անտարբեր զիս շրջապատող իրաց նկատ-
մամբ: Այսպէս կորսուած էի ցաւերուս մէջ,
երբ առաւօտ մը արհեստանոցը դուայ զՄա-
րիա, այն կինն որ իբր օրինակ կը ծառա-
յէր մեզ երբոր Բասքալին առաջին անգամ
եկած էր. անկէ է որ իմացայ թէ Բասքա-
լին ինչպէս խաբած էր զիս: Աւասիկ ինչ
անցած էր.

Մեր սիրոյն վերջին ամսուն, Բասքալին,
փոխանակ իւր տիրուհոյն քով երթալու
ինչպէս կ'ըսէր ինձ, իւր արդուարդին հա-
մար ստակ շահելու պէտքէ մղուելով իր օ-
նակ ծառայած էր լուսանկարչի մը արհես-
տանոցն, ուր կը շինէն այն պատկերները
զորս ոստիկանութիւնը կը գրաւէ: Երբոր
գտնէ, և զորս յաճախ օտարազգիք կը գը-
նեն շատ սուղ և կը փնտռեն անյադարար
Անդ. աւարուած էր իւր ընկերուհեաց միոյն
ձեռամբ: Քիչ ատենէն, խեղճ աղջկան փա-

առասիրութիւնը գգուող հրապուրիչ առաջարկներ ըրած էին իրեն, և, պերճ կենաց փայլէն շլացեալ, յիտալիա մեկնած էր երիտասարդ Անգլիացւոյ մը հետ :

Առ յաւէտ կորսուած կը կարծէի զայն, և, թէեւ անմխիթար, տեսակ մը սփոփանք կը գտնէի սա մտածման մէջ թէ այլ եւս չը պիտի տեսնէի զնա . ինձ այնպէս կը թուէր թէ բժշկուած էի : Այս պատրանքս չուտով փարատեցաւ :

Նամակ մ'ընդունեցայ Բասքայինէ . Փարիզ էր և կ'ուզէր զիս տեսնել :

Այդ նամակը կարդալով միայն հասկցայ թէ տակաւին ո՛րքան կը սիրէի զնա . այլ զօրութիւն ունեցայ չպատասխանելու, որովհետեւ կը սիրէի զնա, և աներկբայ էի թէ վերստին տեսնելով զնա, չպիտի կրնայի դիմադրել և այսպէս երկուքս ալ թշուառութեան պիտի մատնուէինք :

Նորէն գրեց ինձ, ներողութիւն խնդրեց, և ըսաւ թէ եթէ իւր ժամադրութեան չերթայի, ինք պիտի գար իմ տունս :

Տասն և հինգ աւուր չափ տուն չգարձայ և կարծեցի թէ աղատած եմ այս զուգորութեամբ, որ աւելի խոր խոցեց զիս քան իւր փախուստը . բայց, առաւօտ մը, արհեստանոցին մէջ գտայ զնա : Եկած էր իբր օրինակ ծառայելու :

Անհնար է նկարագրել թէ ի՞նչ զգացի զայն տեսնելով . ինձ այն կուգար թէ տեսնու վերսկսած էր :

Արցածիս չափ համարձակութեամբ անոր նայեցայ : Բայց այլ եւս այն էակը չէր զոր սիրած էի . իւր նայուածքն աւելի յանդուգն էր, իւր քալուածքն աւելի համարձակ, իւր շարժումներն աւելի շնորհալի . մազերը ճակտին վրայ ձգած էր գրգռիչ կերպով մը . իւր ուսերը կըրցած էին, իւր կուրծքն աւելի լայն և աւելի ուռեցած էր, և ձայնը նուաղ յատակ ու նուաղ թարմ :

Ուզեցին բացատրել իրեն իւր բռնելիք դիրքը :

— Բա՛, անօգուտ է այդ, ըսաւ, այլ եւս առաջուան փոքրիկ աղջկիկ չեմ :

Չեռաց արագ շարժումով մը հանեց իւր հանդերձներն որք անբարոյական ճոխութիւն մը ունէին . յետոյ, առանց մէկու մ'օգնութեան, սեղանին վրայ ելաւ, և ամենուս նայելով,

— Այսպէս աղէ՛կ է, հարցուց :

Ճիշդ առաջին անգամուան դիրքն էր, աչերն աչերուս մէջ :

Ի մարտ հրաւէ՞ր մը թէ աղաչանք մ'էր սա : Դիմադրելու անձնապատուութիւնն ունեցայ, և ինքնիրենս երգում ըրի չհանդիպիլ իւր ակնարկին . այլ անկարելի եղաւ այս . այդ ակնարկը կ'այրէր, կը քաշէր զիս և արտեւանունքս վեր կ'առնուր . մեր աչերն իրարու կը հանդիպէին և սիրտս կտոր կտոր կը լինէր :

Չգացի որ յոյժ տկար եմ . հանգստեան միջոցին տեղս փոխեցի :

Եթէ երբէք աղաչանքով սկսած էր, ալ այնուհետեւ բացայայտ տեսնուեցաւ թէ յասպարէզ կը հրաւիրէր զիս . սովորականէն չափազանց ազատութեամբ մը կը վարուէր ամենուն հետ : Առաւել յանկուցիչ էր քան երբէք . աշակերտները իւր բոլորտիքը կը ժողլուէին, և ամենուն ալ կը պատասխանէր . կը տեսնէի որ կը խօսակցէր, կը խնդար, թող տալով որ դրկեն զինքը, և զինքը քաշողներուն ծնգաց վերայ նստելով :

Նրբոր դուրս ելաւ, տեսայ որ փոքրիկ կառք մը նստաւ, որ դրան առջեւ կ'սպասէր իրեն : Ուրեմն չքաւորութիւնը չէր որ արհեստանոց բերած էր զայն, այլ սէրը կամ վրէժխնդրութիւնը :

Ամբողջ շաբաթն այսպէս անցաւ . նախանձու բոլոր ցաւերով կը տառապէի . նախանձուն օր արհեստանոց կ'երթայի առաջօրոյն հաճոյք մը գտնելով զայն . տեսնելու մէջ . բայց, կը կրկնեմ քեզ, դժընդակ բան էր այս, և չեմ կարծեր թէ աւելի սոսկալի տանջանքներ գտնուին քան զայնս որոցմով տառապեցայ այդ ութն աւուրց մէջ :

Վերջապէս մեկնեցաւ առանց իրարու հետ բառ մը փոխանակած լինելու, և ես իմ սրտաբեկութեանս մէջ խորասուզեցայ վերստին . ամեն վայրկեան կը դողայի որ տունս կը գտնեմ զնա . բայց չեկաւ, և վեց ամսոյ չափ բնաւ իւր խօսքը չլսեցի . կը կարծէի թէ ալ վերջացած էր, և սակայն ո՛չ տակաւին :

Իրիկուն մը, տուն վերադառնալու ատենս, սենեկիս առջեւ կին մը տեսայ . Բաղդալինն էր . ուզեցի վար իջնել, կեցուց զիս :

— Նթէ սիրած ես զիս, ըսաւ, գթա-
ցի՛ր իմ վրայ:

Իւր տկար և գրեթէ անորոշ ձայնը սոս-
կում ազդեց ինձ:

Սենեակս մոտայ, ինք ալ ետեւէս: Տըժ-
գոյն էր, նիհար. իւր աչերը խռոչացեալ
էին, իւր այտերը ցնդուած. սեւ մետաք-
սեայ շրջազգեստը պատուտած և ալտոտած
էր:

— Քեզ կը դիմեմ, ըսաւ նստելով, ո-
րովհետեւ դու միայն սիրած ես զիս և զքեզ
միայն սիրած եմ ես: Կերեւայ թէ կուրծ-
քէս հիւանդ եմ և թէ հազիւ քիչ մ'ատեն
ևս կ'ապրիմ: Նրբոր այս բանս զիտցայ, ու-
ղեցի վերջին անգամ մ'ալ տեսնել զքեզ և
ծառայութիւն մը խնդրել քեզէն, այն է
խոստանաւ ինձ մահուընէս յետոյ մարմինս
պահանջել. կ'ըսեն թէ չխնդրուած զիակ-
ները կը կտրտեն և ես կը սոսկամ այդ բա-
նէն. թերեւս յիմարութիւն է այդ, ըսես,
այլ եթէ ապահովցնես զիս թէ խնդիրքս կը
կատարես, աւելի հանդարտ կը լինիմ:

Գլուխս դարձուցի արցունքներս ծած-
կելու համար, որովհետեւ տեսնելով և մա-
նաւանդ լսելով զնա՝ անհուն արգահատանք
մ'զգացած էի:

— Օ՛ն, զաւակս, ըսի՛ ջանալով հան-
դարտ ձայն մ'առնուել, թերեւս կարծածիդ
չափ հիւանդ չես:

— Ո՛հ, ո՛չ, պատասխանեց. այլ եւս
սանդուղներէն վեր չեմ կրնար ելնել, զի-
չերն ի բուն կը հաղամ, և յետոյ ձեռացս
և ներքաններուս մէջտեղը միշտ կ'այրի, և
կ'ըսեն թէ յոյժ գէշ նշան մ'է այդ:

— Ե՛հ, աւելցուցի, եթէ այդչափ տը-
կար ես, հոս կեցիր, կը խնամենք զքեզ:

— Ատիկա անկարելի է. նորէն շնոր-
հակալ եմ, բայց չեմ կրնար: Նթէ քեզմէ
բաժնուած չլինէի, այնքան լա՛ւ պիտի լի-
նէր, բայց այժմ...: Նւ յետոյ կարողու-
թիւն չունիս... թերեւս երկար տեւէ հի-
ւանդութիւնս... դուք ալ չափաւ աշխա-
տիս... վերջապէս սուղի կը նստի...

Պնդեցի. երկար ատեն դէմ կեցաւ,
այլ վերջապէս զիջաւ:

— Պառկէ՛, ըսի իրեն:

— Հապա դո՛ւն:

— Ե՛ս, այս գիշեր ալ թիկնաթոռիս վը-
րայ կ'անցընեմ:

— Ո՛հ, ոչ, չեմ ուզեր. գիտեմ թէ ա-
ռաջուան պէս միասին չենք կրնար լինիլ:
Գէթ խշտեակ մը պատրաստէ:

Հակառակ աղաչանացս, խշտեակ մը պատ-
րաստեց ինձ:

Նրբ օրը ծագեցաւ, դնացի բժիշկ մը
բերի: Բասքային արգարեւ թաքուն թո-
քախտ մ'ունէր. բայց ա՛յնքան խնամքնե-
րով, բարեկեցութեամբ և հանդարտու-
թեամբ շրջապատեցի զնա, որ բաւական
բարեգործ մ'զգաց. հազը նուազեցաւ, շըն-
չառութիւնն աւելի դիւրին եղաւ:

Գաղցրութեամբ և երախտագիտութեամբ
լի էր ինձ համար և գրեթէ մեր առաջին
աւուրց կեանքը կը վարէինք, սա տարբե-
րութեամբ միայն որ խնամով կ'զգուշանա-
լինք ամեն բանէ որ կրնային յիշեցնել մեզ
մեր անցեալն և երջանկաւէտ օրերը:

Ամէն մը յետոյ, հիւանդութիւնն անհե-
տացած կ'երեւէր: Բասքային կ'երթար,
կուղար, ամեն բան կարգի կը դնէր և իւր
թարմութիւնը կը վերստանար. իւր աչերը
միայն կը սահէին կիզիչ միայլ մը. այլ եթէ
Ֆիզիքապէս չէր առաւապեր, բարոյապէս
երկուքս ալ կը տառապէինք, որովհետեւ
երկուքս ալ զիրար կը սիրէինք տակաւին և
երկուքս ալ մշտնջենական անհանգստու-
թեան մէջ կ'ապրէինք, ինք վախէն, ես ալ
հպարտութենէս:

Գիշեր մը, քնացած միջոցիս, ընդոստ
արթնցայ տաք շունչէ մը որ ճակտիս վրա-
յէն կ'անցնէր: Աչերս բացի, և Բասքայինը
տեսայ որ վրաս ծռած էր:

— Ի՛նչ ունիս, ըսի իսկոյն:

— Ո՛հ, ոչինչ, պատասխանեց վեր ելնե-
լով, կ'ուզէի տեսնել թէ կը քնանայի՞ր:

Բայց անմիջապէս յետոյ բովս վերադառ-
նալով,

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, յարեց, սուտ կը խօ-
սիմ. եկոյ զքեզ համբուրել և շնորհակալ
լինիլ քեզ՝ քնացած միջոցիդ. ամեն գիշեր
այսպէս կ'ընեմ. ծուր կը գնեմ քու քովդ,
կը խնդրեմ Մատուծմէ որ մեռնելէս առաջ
ներէ ինձ, և յուշիկ իմն կը համբուրեմ
զքեզ:

Թեւերուս մէջ առի զնա, ամեն ինչ
մոռցուեցաւ...:

Առաւօտուն, իւր առաջուան հագածին
նման փոքրիկ շրջազգեստ մը և ծաղկազարդ

պզտիկ գլխարկ մը դնեց, և առաջուան նման գիւղերը դնացինք:

Երկար չտեսեց այս: Իրիկուն մը Բասքալին պաղ առաւ: Հետեւեալ օր իւր հիւանդութեան ախտանիշերն երեւան ելան առաւել ուժգնակի և ութ օր յետոյ թեւերուս մէջ կը մեռնէր՝ տակաւին ներսողութիւն խնդրելով ինձմէ:

ԷՔԹՈՐ ՄԱԼՈՅ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՌ ԳԻՒՂԱՅԻ ԵՂԲԱՐՍ

Հայոց լեռանց, պարարտ դաշտաց,
Նահապետաց մշակ զաւակ,
Քեզ նուիրեմ, քեւ քո եղբարց,
Այս իմ երգոց վարդից փնջակ:

Սիրեմ՝ զքեզ, սիրեմ՝ քո դաշտ,
Առատ քրտինք քո ճակատին,
Դու աշխարհի աղնուական,
Որ հաց կուտաս մեր սեղանին:

Վարե եղներդ, իմ քաջ եղբայր,
Եւ խոր հերկէ թող քո գութան.
Ազատ ձայնով երգէ յօժար,
Երգ ու տաղեր նուիրական:

Հերկէ՛, ցանէ, յուսով երգէ,
Հնձէ առատ ու համբարէ.
Միշտ ժիր եղիր, արթուն հսկէ,
Աստուած սեղանդ կը զարդարէ:

Սուրբ են դաշտերն զօրս դու գործես,
Հակտիդ արեամբ քրտամբ ցօղբած.
Զլինի մոռնաս թողուս չուես,
Անդ է միայն քո ազատ հաց:

ՀՈՂԱԳՈՐԾ

ԶԱՆԱԶԱՆՔ

ԵՐԿՈՒ ԺԱՄ

ՄԱԶԱՍԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՁ

(Շարունակութիւն եւ վերջ)

Այս անգամ մտնողը Փարիզի երիտասարդ ստահակներէն մին էր, Շէրլ-Միտի փողոցի դոլերուս գրեթէ համանման: Մըսավաճառի մանչ մ'էր, Քայէ անուն, որ չէր յաջողած իւր արհեստին մէջ:

— Աւատիկ, ըսաւ ինձ ոստիկանապետը, մին այն չարագործներէն որք դրամարկղ մը գողնալով, Թիւլլըրի պարտեզը փոխադրեցին զայն գիշերանց և ամենայն անվախութեամբ պարպեցին: Դժուարին գործ, այնպէս չէ՞:

— Աղէր գործ, ըսաւ Քայէ, համարձակ ծիծաղով մը: Ո՛չ որ արգելք եղաւ մեզ կամ բան մ'ըսաւ:

— Խոտովանէ՛, Քայէ, թէ դու էիր գործին ղլուխը. հապա դրամարկեղ պտուտակներն ո՞վ քակեց:

— Քրէթօն:

— Գիտեմ, սակայն անոր անունը Քրէթօ չէ. ես կ'ուզեմ իւր ճամարիս անունն իմանալ և այդ պատճառաւ է ահա որ կ'երկարածգուի գործին քննութիւնն. ըսէ՛ տեսնեմ այդ մարդուն բուն անունը:

— Քայց չեմ գիտեր, պարոն Մասէ. արդէն ինձ համար ի՞նչ օգուտ պիտի ունենար զայն յայտնելն. ես գործս գիտեմ:

— Լա՛ւ, լա՛ւ, չես ուզեր կամ չես կըրնար յայտնել. մնաս չունի: Առ քեզի բսան սու ծխախոտիդ համար:

— Շնորհակալ եմ, պարոն Մասէ:

Զայս ըսելով, Քայէ դուրս ելաւ ուրախ գուարթ:

Երկար ժամէ մ'ի վեր յորում՝ անշարժ և լռիկ՝ հանդիսատես կը լինէի մարդկային պէս պէս թշուառութեանց որք կը պարզուէին աչքիս առաջ այդ մերկ խուցին մէջ ուր մութը կ'սկսէր կոխել, ոստիկանապետին սեղանին վրայ կը դիտէի արծաթեայ ժամացոյց մը, զոր երեք օր առաջ տեսած էի

իւր գրասենեկին մէջ, յՕրֆէվր փողոց : Ուղեցի ժամն իմանալ այդ ժամացոյցէն, վասնզի կը վախճայի որ եթէ իմ ժամացոյցս հանեմ, սարոն Մասէ պիտի կարծէր թէ կը ձանձրանամ կամ կ'աճապարեմ, բայց զարմացմամբ տեսայ որ արծաթեայ ժամացոյցը չէր բաներ :

Այս պահուս նորեկ մը եկած նստած էր յարդեայ փողոց աթոռին վրայ, սեղանին միւս ծայրն, ինձ յանդիման : Քսան-քսան երկու տարեկան երիտասարդ մ'էր, երկար դիմօք, աչքի զարնող, կրնամ իսկ ըսել նշանաւոր դիմօք և նորաբոյս դեղին մօրուքով :

— Վերջապէս չպիտի՞ ուզես բուն անունդ յայտնել, Քրէթօ :

Քրէթօ՝ որ դրամարկեղ գործոյն մեղսակիցներէն մին էր, ժխտական պատասխան մը տուաւ մեղմ ձայնիւ, և երբ կը ժպտէր՝ նշմարեցի որ սպիտակ և մաքուր ակռայներ ունէր :

— Ես քու նպատակդ գիտեմ. դու կամաւ կ'ուզես հարցաքննութիւնը երկարել, վասն զի լաւագոյն կը համարիս ի Մազաս մնալ իբր ամբաստանեալ քան կեղբոնական բանտը զրկուիլ կամ Նոր-Քալէտոնիա արտորուիլ...

— Ո՛հ, այդչափ առաջ մի՛ երթաք, պարոն Մասէ, պատասխանեց Քրէթօ դարձեալ ժպտելով :

— Բայց ինչո՞ւ չէ, վրադ ծանրացող յանցանքներն յոյժ մեծ են. դիչեր ժամանակ, բնակեալ տան մը մէջ գողութեան համար դռներ խորտակել և զէնք ու կեղծ բանալիներ գործածել :

— Ա՛հ, չէ՛, կեղծ բանալի չկար, յարեց Քրէթօ կնոջ մը նման կոտորուելով. սպանդագործին դուռը լծակով բացինք, մինչեւ իսկ շատ աղմուկ ելաւ :

— Այդպէս դռներ խորտակելու յանցանքին համար ալ օրէնքն այնքան խիստ պատիժ կը տնօրինէ որքան կեղծ բանալի գործածողի մը համար : Զէնք չունէի՞ք վրանիդ :

— Ես չունէի, սարոն Մասէ :

— Կը յիշեմ, Յ* * * էր որ ընկուկէր մ'ունէր : Բայց եթէ դրամարկը կոտրած ժամանակնիդ սպանդագործը ներս մտնէր, ի՞նչ պիտի պատահէր :

— Ես ճրագը պիտի մարէի, պատասխանեց երիտասարդը սքանչելի պարկեշտութեամբ մը, և մարդուն ոտքերուն մէջէն պիտի փախչէինք :

— Կը հասկընամ : Ո՞վ յղացաւ այս գործին գաղափարը :

— Քայէն էր որ տանը մէջ աշխատած էր և մեզի ըսաւ թէ դրամարկեղ մէջ թերեւս մինչեւ յիսուն հազար Փրանք գտնէինք, կամ առ նուազն քառասուն հազար Փրանք : Նրեք օր, դիչեր ցերէի, զայս երազեցինք. քառասուն հազար Փրանքը գէշ դուստր չէ :

— Յաւալին այն է որ դուք կողոպտուեցաք, անտուկին մէջ երկու հազար Փրանք կար միայն, և դուք ինն հարիւր Փրանք թողուցիք : Կը տեսնեմ որ դեռ նորաժարժ էք և ամենքնիդ ալ Նոթր-Տամի աշտարակին մէջ բռնուեցաք :

— Այո՛, դեղագործին պատմութիւնն յիշեցնել կ'ուզէք, յարեց երիտասարդ գողը կանացի ժպտով մը :

— Ոտիկաններուս գալուստը չսեցիք դուք, վասն զի ասուէ մուճակներ հագցունել տուած էի անոնց :

— Իրաւ է այդ, և վերնայարկին մէջ ձերբակալուեցանք այն մարդէն որ ինքզինքը գաւառացի կը կեղծէր և Փարիզի ուղեցոյց մը կը կարդար :

— Քայէն ալ ձեզմէ՞ էր ուրեմն :

— Հասա՛, ինքն ալ մեզ նման «վարդադոյն Ժապաւէնի ասպետ» է, ինչպէս կ'ըսեն : Խեղճը վայրկեան մը վախցաւ սպանդագործին տան մէջ : Նրբ դուռը խորտակեցինք՝ առաջ ինք ներս մտաւ, բայց յանկարծ ընկրկեցաւ և սոսկմամբ մինչեւ սանդուղին ստորոտը փախաւ : Ի՞նչ եղար, սուռացի : Խուցին մէջ մարդ մը կայ, պատասխանեց : Անպիտան, գոչեցի, բու գէմք էր որ դրան դէմ կախուած հայելիին մէջ տեսար : Ասոր վրայ շատ խնդացինք :

— Ի՞նչպէս փոխադրեցիք դրամարկը :

— Փողոցի կառքով մը որ զմեզ մինչեւ Թիւլլըրի դուռը տարաւ. հոն վար իջեցուցինք դրամարկը, ներս մտցուցինք, և ես ետեւէն գնացի : Շատ նեղուեցայ, հաւատացէք, արիւն քրտինք մտած էի : Արդէն չպիտի կրնայի յաջողիլ եթէ լաւ գաղափար մը չ'յղանայի : Դրամարկը սյս ու այն կողմ դարձուցի, մինչեւ որ բեւեռները մէկիկ

մէկիկ բրդան . այսպէսով դործը քալեց . երկու ժամէն աւելի աշխատեցայ :

— Բայց քու բուն անունդ ըսէ՛ տեսնենք, Գրէթօ : Ունայն տեղը հարցաքննութեանց երկարելուն պատճառ կը լինիս : Քեզ բան մը չեմ խոստանար և չեմ ալ կըրնար խոստանալ, բայց անուրանալի է թէ երդուեալ դատաւորք և դատարանն հաշտ աչօք պիտի վարուին քեզ հետ համարձակախօսութեանդ համար :

— Մի՛ ստիպէք զիս, պարոն Մասէ, նուազեմ կըրնար զրուցել ծնողացս պատուոյն համար :

— Քանի՞ տարեկան ես :

— Քսան և մէկ տարեկան :

— Լրացուցած :

— Լրացուցած :

— Ուրեմն արդուն հասակիդ մէջ կը գտնուիս և ծնողքէդ բան մը չենք կըրնար պահանջել . կըրնաս առանց երկիւղի յայտնել ամէն բան :

— Անկարելի է :

— Դու գիտես, ութ օրէն վերստին կը տեսնուինք . . .

— Բայց ո՛չ, պարոն Մասէ, լաւ է որ հիմա խօսիմ և ամէն ինչ յայտնեմ : Իմ մահանունս յիրաւի Գրէթօ է, միայն թէ անունս Օկիւսթ ըսած էի, սխալ է, Ալլէր է : 1860 օգոստոս 20 ին ծնած եմ ի Բոն-Լէվէք և 1881 յունիս 9 ին ղրինուորապետութեան վիճակ ելաւ ինձ : Գրեցէք ի Բոն-Լէվէք եւ պէտք եղած տեղեկութիւնները կըրնաք քաղել :

— Լա՛ւ, Գրէթօ, շատ աղէկ ըրիր խօսելովդ : Կեցիր որ քսան սու տամ քեզ ծխախոտիդ համար :

— Եթէ քու բարութեանդ մէկ արդիւնքն է այդ նուէրը, պարոն Մասէ, կարելի չէ՞ որ այսօր կրկնապատկես դոյն :

— Այդ չըլլար, ձեզի ստակ տալը վտանգաւոր է . . . դուք կարգ մը փոքր . . . ներ էք զորս պէտք չէ քաջալերել : Առ այժմ դնա՛ւ : Աչքս արծաթեայ ժամացոյցին վրայ յառած կը դիտէի, և կ'սկսէի տեսակ մը մեծ մտահոգութիւն զգալ : Յանկարծ դուռը բացուեցաւ և անսկիւղ երեւոյթ մը արձանացուց զիս ամբողջ վրայ :

Ներս մտաւ հինգ ոտք և ութ բթաւ մատ բարձր հասակաւ և հերակլեան կապ-

մուածով մարդ մը . լայն ուսերուն վրայ կ'երեւէր վտիտ և երկար դէմք մը, չէկ պէխերով : Կատաղի կերպարանք մ'ունէր :

— Կը կարծէի թէ, ըսաւ Պ. Մասէ, խելքդ գլուխդ եկած է, սակայն կը տեսնեմ որ Մադամի մէջ նորէն աղմուկ կը յարուցանես : Այդ տեսակ բաները չեմ սիրեր :

— Ես աղմուկ չեմ հաներ, պատասխանեց Պոտուէն խիստ ձայնիւ մը և փոքրիկ ամբողջ վրայ նստելով . սակայն բաներ կան որոց դէմ կը բողբոքեմ : Այսպէս, օրինակի համար, կ'նոյս յասպիւնները ցուցակին մէջ չէին անցուցած : Ինչո՞ւ համար, յարեց բաւական սպառնալից շեշտով մը :

— Իրա՞ւ, գոչեց Պ. Մասէ հատու ձայնիւ մը, Պոտուէնի աչքին մէջ նայելով շեշտակի եթէ քիչ մ'ալ կենաս պիտի ամբաստանես զվեցթէ դողցած ենք զանոնք . . . Սէն-Քանթէն թաղին՝ ոստիկանապետն է որ նկարագրեց այդ գոհարները և ծրարները կ'ընէր : Գալով չգամուած յասպիւններուն, որք արդէն արժէք մը չունին, ես ինքս ձեռօքս յանձնեցի զանոնք Պրանիքա կոմսուհւոյն : Ինքզինքդ իբր չարամիտ մէկը ցոյց մի ներկայացներ մեզ, վասն զի գիտենք թէ չարամիտ չես : Այսու հանդ երձ բաւական խոշոր որոգայթի մը մէջ գտայ զքեզ :

Սէն-Քանթէն գնացի և գտայ բնակարանը . ծալտեալ ոստիկաններէս մին երկաթուղւոյ պաշտօնատարի հագուստով ետեւէդ զրկեցի, որպէս զի հրաւիրէ զքեզ նոյն երեկոյին գալ և հակերուդ սակագնոց մասին եղած մէկ սխալն ուղղել . . .

— Ես ալ եկայ, երբ կամքս ուզեց, ընդ միջեց Պոտուէն ամբարտաւանութեամբ :

— Այո՛, երկրորդ առաւօտը միայն, երկու անսկիտան մաքսախոյսերու հետ, եւ հաղիւ կըցայ զքեզ . երկու ոստիկաններու մէջ ձգել : Դու սկսար պոռալ կանչել, ըսելով թէ բան մը չէիր հասկնար այս ամենէն, թէ գոհարով լի պարկը Պրանիքա կոմսուհւոյն առած էիր և թէ երբէք Փարիզ եկած չէիր : Յայնժամ լուսանկար մը ցոյց տըւի քեզ, այսինքն քու լուսանկարդ : Շիտա կը մարդու մտքէ չտիտի անցներ Պեճիոյ կամ Գերմանիոյ մէջ գտնել զքեզ, եթէ տարօրինակ քմահաճոյքով մը՝ որուն խելք չհասնիր, Փարիզ չգայիր և հանել չտայիր լուսանկարդ որոյ վրայ կը նշմարուի Պրանիքա

կոմսուհիին գողցած գնդափողներէդ մին : Եւ տխարութիւնդ այնքան առաջ կը տանիս որ լուսանկարիդ փոխարէն դրամի տեղ գոհարեղէն մը դուտաս, զոր լուսանկարիչը Մոնմարթր փողոցը փոխանակչի մը կը վաճառէ : Ինձ իմաց տուին թէ վաճառատան մը սպասուհանին մէջ օտար երկրէ եկած գոհարեղէններ ի տես դրուած էին . նոյն ժամայն յիշեցի Պրանիքա կոմսուհւոյն գոհարեղէններն . իմաց տուինք կոմսուհւոյն որ եկաւ ճանչցաւ իւր ռուսական ասպարանջաններն , որոց վրայէն աւերորդ է ըսել թէ ադամանդները վերցուած էին : Փոխանակչին խանութէն կ'երթամ լուսանկարչին դուրծարանն , հոն կ'առնուամ քու լուսանկարդ , ետեւէդ կուգամ , և կը գտնեմ զքեզ ի Սէն-Քանթէն : Իրաւ է որ սուղի նստեցուցիր ինձ քու ձերբակալումդ , ոտքերուս մէջէն անցար և գրեթէ ձմեռեցիր զանոնք :

— Սխալ է այդ . ո՞վ ըսաւ թէ պարոն Մասէին դպած եմ ես . չեմ ուզեր որ այս պիտի բան մ'ըսեն իմ վրայօքս , գոչեց Պոտուէն բարկացայտ ոտքի ելնելով :

Այդ պահուն աչքս դրան յառած էի և տեսայ որ կէս մը բացուած էր . դուռն ըսպասող պահակն ուշադիր էր ելած ձայներուն , և պատրաստ՝ ներս մտնել ի հարկին . սակայն այդ արձակ համարձակ և առանց չլթայի . թողուած վայրենին կարող էր մէկ բռնցի հարուածով սպաննել ոտիկանապետն որ իւր պաղարիւնութիւնը չէր կորսնցներ :

— Պոտուէն , ես եմ քեզի ըսողը , յարեց Պ. Մասէ :

— Կը սխալիք . կա՛մ դուք հաւասարակըչութիւննիդ կորսնցնելով դետին ինկար և կա՛մ չո՞ւներս ոտքերնուդ տակէն անցան : Բայց զիս չունեցուս պատասխանատուն չէք բռներ , կարծեմ :

— Եղածը փոյթս չեմ ըներ սակայն , չարունակեց Պ. Մասէ միեւնոյն պաղարիւնութեամբ , քանի որ բռնեցինք զքեզ : Աւազանը նետուեցար և սկսար լողալ , բայց ոտիկանս որ արագընթաց և հեռատես էր , ես ալ ձուլուած ոտքիս վրայ քաշկռտուելով , վերջապէս եկանք հասանք քեզ աւազանին միւս եզրը : Այն ատեն դու ըսիր ինձ . « Պարոն Մասէ , ջուրին մէջ պաղ առի , գաւաթ մը տաք գինի խմցունելու էք ինձ » :

— Այդ իրաւ է , և եթէ ջուրը նետուելէս առաջ պատառ մը բան կերած չլի . նէի , զիս ողջ չպիտի գտնէիք : Ինչ և է , հիմա ի՞նչ կը պահանջեն ինձմէ :

— Կ'ուզենք դիտնալ թէ ո՞ր վայրկենին կորզեցիր գոհարեղէնները , վասն զի կ'երեւի թէ կառախմբին ընթացած ժամանակ կը լինելու է . արեւելցիի մը չափ հուժկու ես և եղջերուի մը պէս թեթեւաչարժ . կարող ես արագասահ կառախմբի մը քովն ի վեր վազել և ի հարկին վար ցատկել առանց միասուելու :

— Ձեմ դիտեր թէ ո՞վ կողոպտեց . գետնէն դուայ պարկը . կ'երեւի թէ Երբելինի և Քոլոնեի ճանբուն մէջտեղն ըլլալու է :

— Բուն խնդիրն հող է ահա . արդէն անգամ մ'ալ պիտի տեսնեմ զքեզ , վասն զի քու թղթերդ դատարանին պիտի յղուին վերստին :

— Բայց ես պեճիակուն հպատակ եմ և կ'ուզեմ Պեճիոյ մէջ դատուիլ . արդէն գորդէն գործն ալ Պեճիա անցած է . Քրանսական դատարանք իրաւունք չունին զիս դատելու :

— Քու ուղածդ կամ չուղածդ բնաւ կարեւորութիւն չունին մեզ համար . բարձրագոյն իշխանութեան անկ է դատել զայդ . ես ասահով եմ թէ գողութիւնը կատարուած է Փարիզի և Երբելինի ճանբուն մէջ տեղը :

— Ես կ'ըսեմ թէ ո՛չ :

— Դու բան մը խոստովանիլ չես ուզեր . ի՛նչ և է , կարճ կապենք , և ջանա՛ որ խեղօք կենաս այսուհետեւ :

Պոտուէն դուրս ելաւ մանչելով , այլ խոնարհելով այն սողալատի նման հաստատաւ կամ և պաղարիւն մարդուն առջեւ որ և ո՛չ իսկ փոքրիկ զէնք մ'ունէր իւր անձին պաշտպանութեան համար :

— Ձիս սպաննելու փափաք ունի , ըսաւ Պ. Մասէ հանդարտօրէն , բայց դեռ կը յուսայ որ Պեճիա կը զրկուի իրաւանց բաւաւ կան փափուկ կէտ մ'է այս :

Իրիկունը վրայ հասած էր , երբ փոքր երիտասարդ մը , սեւ լօղիկ մը հագած , կրնանք ըսել թէ խուցէն ներս սահեցաւ քան մտաւ : Հինդ ոտք երկայնութիւն ունէր , թուխ և առատ մազեր , և բաւական

կանոնաւոր դէմք մը, սեւ յօնքերու տակ սեւ աչքեր, սեւ պեխեր, մին այն դէմքերէն որոցմէ հարիւրաւորներ կը նշմարուին Փարիզի ուսանողաց և գրադիրներու դասուն մէջ:

— Կարգը քեզ եկաւ, ըսաւ Պ. Մասէ առանց անունը տալու: Եւ փայտեայ սպիտակ սեղանին վրայէն առնուիլ արծաթեայ ժամացոյցն, ինչպէս և մինչեւ ցայն վայր թղթերուն տակ պահուած վարդադոյն տոմս մը, երիտասարդը լուսամուտին քով տարաւ, ուստից ձմեռնային ցուրտ իրիկուան մը տկար լոյսը միայն կը փայլէր: Ոստիկանապետն հարցուց անոր.

— Աղէկ դիտէ՛ սա շղթայն և ժամացոյցը. տես՛ թէ կը ճանչնաս:

Թխադէմ փոքր երիտասարդը շղթայն մատներուն մէջ առաւ, տեսալ մ'անտարբերութեամբ քննեց զայն և գլուխն որորեց:

— Սակայն, ըսաւ Պ. Մասէ բաղցր ձայնիւ մը, այս այն ժամացոյցն ու շղթայն են զորս Մոն-տը-Բիէթէի Սնտուկին աւանդ ձգած ես սեպտեմբեր 17 ին, Տիէօլաֆէյ անուամբ. աւասիկ ընդունադիրն. տակաւագործ Ֆ*էն գողցած էիր զայն:

— Ա՛հ, յարեց երիտասարդն, իբր թէ անկարեւոր դէպք մը յիշելով, այս ա՛յն է:

— Ի՞նչ կերպով գողցար զայն:

— Աղկից պարզ ի՞նչ կար. Ֆ*էն դըռնապանութիւն ալ կ'ընէ. պատկերազարդ թերթի մը բաժանորդադրութիւնը նորոգելու գնացած էի. երբ վեր ելաւ, խցիկին մէջ իրեն սպասեցի. ժամացոյցը սեղանին վրայ դրուած էր. դրպանս ստակ մը չկար, և... կը հասկնաք անշուշտ:

— Նոյն օրն իսկ դրաւի դրիր զայն:

— Ո՛չ, յաջորդ օրը,

— Այն ատեն ամսոյն 16 ին գողցար զայն:

— Ճիշդ է:

Այս խօսակցութեան առաջին բառերը լսելու, խորին յուզում մը պատեց զիս, վասն զի լրագիրներէն տեղեկացած էի թէ Շարանթոն փողոցի երեւելի ոճրագործը Պ. Մասէի ձեռամբ ձերբակալուած էր ի Քիէյլ, ուր կը պահուըտէր Տիէօլաֆէյ ծածկանուան ներքեւ:

Կարելի՞ էր միթէ որ այդ սեւ աչուի, աւելի մեղմադժիկ քան խոժողադէմ, փափկակազմ, անուշ ձայնով երիտասարդն

որ դէմն կեցած էր, Սթորտէօր անուն այրի կնոջ սպանիչը, գարշելի Պիսթորն եղած լինէր:

Այլ տարակուսանքս երկար չտեւեց:

— Հոմանուհւոյդ նամակ մը գրած էիր, ըսաւ անոր Պ. Մասէ ծանր ձայնիւ. մոռցար ուրեմն որ պատուիրած էի քեզ խոհեմ կենալ և խօսքէս դուրս չենել: Ի՞նչ կը նշանակէ այդ ամուսնութեան պատմութիւնը:

— Մեծ բան մը չէ, պարոն Մասէ, պատասխանեց երիտասարդը խուլ և այլայլեալ ձայնով մը, պարզապէս դրեցի հոմանուհւոյս որ եթէ օճիքս ազատեմ այս գործէն և եթէ ինքն ալ դատապարտուի, Նոր-Քալէտոնիա պիտի երթամ դանել զինքն և հետն ամուսնանամ... Այս բանը միայն կրնայ քիչ մը բարձրացնել...:

Այս վերջին բառերն աւելի ցած և դողահար ձայնիւ մ'արտասանեց, այնքան մեղմ որ ինձ կը թուէր թէ Պ. Մասէ չէր լսեր զայնս:

— Գիտե՞ս թէ ինչ ըրիր աղով, գոչեց Պ. Մասէ ցասկութեամբ: Հաւանական, մինչեւ իսկ ստոյգ է որ մահուան դատապարտուիս... Միակ յոյս մը կար զքեզ ազատելու, այն է Հանրապետութեան նախագահին ներողութիւնն: Եւ ահա դու քու ձեռքովդ վտանգի ենթարկեցիր և կորուսիր այդ յոյսը: Ի՞նչ, մահուան դատապարտութեան մը վտանգը կ'սպառնայ գլխուդ, և դու ապագայի երազնե՞ր կը պատրաստես. գէշ չէ: Ամուսնութեանդ և քեզ սպասող երջանկութեան վրայ կը խօսիս: Գիտես սակայն թէ ի՞նչ մեկնութիւն պիտի տրուի այդ նամակիդ, եթէ դատական իշխանութեան ձեռքն անցնի այն. գերագոյն իշխանութեան զօրութեան նկատմամբ վստահութեան պակասութիւն մը կամ անարդանք մը: Այն ատեն ալ դու չկայ քեզ համար, ո՛չ երդուեալ դատաւորաց կողմէն և ո՛չ նախագահին կողմէ: Դու ձեռքովդ հրաւիրած պիտի լինիս այս փորձանքը. վա՛յ քեզ:

Եւ բնածին վեհանձնութեան զգացման մը անսալով, Պ. Մասէ բացաւ խցիկին դուռը և կիսով դէպի նրբանցքն յառաջանալով, լսեցի որ կը հրամայէր պահապանի մը երթալ խանալ թէ Պիսթորի իւր հոմանուհւոյն գրած նամակը ճանբայ հանուած էր:

Պիսթոն, նոյն ինքն Պիսթոնն էր այս մարդ: Եւ այդ վայրկենին իւր հետ առանձին մնացած էի խուցին մէջ: Ինձ համար վտանգ մը չէր կրնար ծագիլ այս անգէն երիտասարդին հետ միայնակ մնալովս. մարդասպանն, այդ պահուն, խորին երազոց մէջ ընկղմեալ, և ո՛չ իսկ զիս կը նշմարէր կարծես:

Եւ սակայն զարհուրելի երկիւղ մը կ'ըզգայի այս տեսակ հանդի շուտէ մը, և կ'ահաբեկէի երեւակայութեամբս աչքիս առջեւ բերելով այն չուան զոր այրի Սթորտէօրի վիզն անցուցած կը խզուէին, մինչ վայրագ գազանը մուրճի հարուածներով գլուխը կը ջախջախէր. կոկորդս չորցաւ և կիզիչ արտասուօք կը լեցուէին աչերս, որք սոսկմամբ յառեալ էին:

Պ. Մասէ ներս մտաւ: — Նամակն հարցաքննիչ դատաւորին ձեռքն անցեր է, ըսաւ առ Պիսթոր: Եւ կրկնեմ քեզ, դու ձեռքովդ ըրիր, վա՛յ քեզ:

Պիսթոր դուրս ելաւ բարեւելով, առանց պատասխանելու:

ՖԻԿՍՏՕ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

12-18 ՅՈՒՆՈՒԱՐ 1885

ՍՐՏԱՔԻՆ

Փարիզէն շարժուաւ առնուած հեռագիրը կը ծանուցանեն թէ հանրապետականը նոր յաղթանակ մը տարած են Վերակոյտի մասնական ընտրութեանց մէջ, որք այս միջոցիս կը կատարին: Բազմաթիւ ակտիւներ կորուցած են Արքայականներէն և Պոնաբարդեաններէն, որք ցարդ աւելի զօրաւոր էին Վերակոյտին քան Երեսփոխանաց ժողովոյն մէջ: Բայց Հանրապետականաց յաղթանակն անպատճառ Յեղափոխականաց յաղթանակը չի նշանակեր: Ֆրանսացի ժողովրդեան ստուարագոյն մասն այսօր հանրապետական է, որովհետեւ յեղափոխական չէ, այսինքն

գիտէ որ Հանրապետութիւնը խոյս պիտի տայ յեղափոխական շարժումներէ և երկրին զարգացումը խաղաղութեան և հանդարտութեան մէջ պիտի փնտռէ, մինչ Պոնաբարդեանց և Արքայականաց առաջին դործը պիտի լինէր, եթէ յաղթող ելնէին ընտրութեանց մէջ, վեր ի վայր չըլէլ ամեն ինչ: Նշանակելի է Պրոյլի դուքսին չկարենալ վերընտրուիլ: Դուքսն Արքայական կուսակցութեան հաղուադիւտ սիւններէն մին էր, և Մաք-Մահոն Մարէշալի Նախագահութեան միջոցին, փորձ փորձած էր Հանրապետութիւնը մեղմիկ միջոցներով կործանելու և անոր տեղ Օրլէանեան արքայական իշխանութիւնը վերահաստատելու. բայց գլխաւորապէս Կամպէդեայի կուսակիցք ի դերեւ հանցին զայս փոքրիկ պետական հարուած, և հիմա Փրանսացի ընտրողը ընդհանրապէս վերջնական հարուած մը կուտան Պրոյլի դքսին ազդեցութեան:

— Թայմը լրագրին Բարիզի թղթակիցը կը ծանուցանէ յունուար 22 թուով թէ, Հասան Ֆէհմի փաշան Պերլինի մէջ ո՛չ Պիզմարք իշխանը տեսաւ, ո՛չ ալ գերմանական ուրիշ քաղաքական անձ մը, և Բարիզի մէջ ալ, ընկերակցութեամբ Էսաա փաշային, ըկ քաղաքավարական այցելութիւն մը տուաւ Պ. Ֆ. Ֆէրրիի: Ամենուրեք Հասան Ֆէհմի փաշան իւր պաշտօնին նկատմամբ լուծիւն պահած լինելով, միաքերն յոյժ դբաղեալ են գտնելու նորա պաշտօնին ինչութիւնն, և այս լուծիւն պատճառները: Հասան Ֆէհմի փաշա կ'երեւի թէ միայն Անգլիոյ մէջ քաղաքական բանակցութիւններ ընելու պաշտօն ունէր:

— Քոնկոյի Դեսպանախորհուրդն, որ դեկտի մէջ իւր ամբողջական նիստերը դադրեցուցած էր, անկէ ի վեր նորէն չէ գումարուած տակաւին: Բայց Դեսպանախորհրդին մասնախումբը կը շարունակէ նիստեր ընել, և կը դբաղի Դեսպանախորհրդոյ որոշման ներկայացեալ երրորդ խնդրոյն քննութեամբ, որ կը վերաբերի այն ձեւակերպութեանց զորս քաղաքակիրթ տէրութիւնք այսուհետեւ պարտաւոր պիտի լինին ի դործ դնել Ափրիկէի անտէր հողերը գրաւած կամ իրենց հովանաւորութեան ներքեւ դրած առեն: Պիզմարք իշխանն անցեալ երկուշաբթի աւուր համար ձալի

հրաւիրած էր Դեսպանախորհրդոյ բոլոր անդամները ,

— Ռիդէրի հեռագրեր կը ծանուցանեն թէ Մայիսէն քանի մը վաշտ անգլիական զօրաց հրաման եղած է Եգիպտոս և Սուէզի ջրանցն երթալու : Այլ կարծուի թէ Անգլիացիք օգնութիւն պիտի հասցընեն Ռուսի զօրավարին , բայց ո՛չ Նեղոսի ճանքով , որ շատ երկայն է , այլ Սուաքիմի եւ Պերպերի ճանքով : Այս գործողութիւնը ցոյց կուտան թէ անգլիական կառավարութիւնն եւս պահով չհամարիր Ռուսի զօրավարին դիրքը :

— Սէն Ժէյմս Կալէն կը ծանուցանէ թէ Անգլիա որոշած է կարել Կորդեան հանգոյցն՝ իւր ուղղակի իշխանութեան ներքեւ տունով Ստորին և Միջին Եգիպտոսն և զՍուտան Վերին Եգիպտոսի հետ Թուրքիոյ թողլով : Բայց պարզ գրոյց մը կը թուի այս : — Անգլիական նախարարութիւնն այս օրերս մեծ փութաշնուկեամբ կ'զբաղի Եգիպտական գործոց քննութեամբ :

— Աւստրալիոյ անգլիական նաւախումբը կարգ մը նոր կղզիներ եւս գրաւեց նախնիքաց շարքու մէջ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Տէրքոսեան ջրի ընկերութեան առաջին ազբիւրի բացումը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ օր , թէքէ-Պաշիի թաղապետական պարտիզին մէջ , մեծաւ ջըով և ի ներկայութեան նախարարաց և բարձրաստիճան հրաւիրելոց :

Հանդէսէն յետոյ , ընկերութեան Տնօրէն Թէրնոյ պէյ , իւր հետ ունենալով վարչութեան անդամներէն Պ. Թէրնանտէզ Տիւազ և Պ. Լէոնիտաս Զարիֆին , կայսերական պալատը գնացին :

Քիչ վերջը , Ն. Կ. Վեհափառութեան կողմէ յատուկ պաշտօնատար մը գալով յիշեալ տեարք քով , Օսմանիէի երկրորդ կարգի պատուանշան ընծայեց թէրնոյ Պէյին :

— Թարիք ծանուցանելէ յետոյ թէ դաւառաց կուսակալներէն ոմանք իրենց կուսակալութեան սահմանին մէջ քննական պնդոյտ մ'ընել չուզելով , չեն մեկնիր իրենց պաշտօնավայրէն , մինչդեռ տէրութիւնը մէն

մի կառավարչի համեմատ յատուկ ծախք որոշած է , որպէս զի անպատճառ տարին երեք չորս անգամ պտոյտի ելնելով քննէ ժողովրդեան վիճակը , կը յաւելու թէ ներքին գործոց նախարարութեան կողմէ ստիպողական հրահանգներ պիտի զրկուին կուսակալաց , որպէս զի այդ պիտի կարեւոր կէտ մ'անտես չընեն :

— Եւրոպական լրագրաց մէջ Լոնտոնէն յունուար 7/19 թուով հրատարակեալ Հովասի հեռագիր մը գրոյց մը կը յիշատակէ , իբր թէ Ռուսիա գաշնակցութիւն մը սուղարկեր է Օսմանեան կառավարութեան :

Մոնիթէօր կ'ըսէ թէ , որչափ որ ստուգութեան կարօտ գրոյց մ'է այս , դիտելի է սակայն թէ հրապարակ կը նետուի այն պիտի պահու մը մէջ , ուր մեծ հաւանականութիւն կայ բոլորովին անհիմն չնկատուելու :

— Հովալէներու խնդրոյն քննիչ յանձնաժողովը կարեւոր որոշում մը տուեր է :

Եւրոպական նախարարութիւնը պիտի հրաւիրուի Հէվալէները փոխանակել կառավարական նոր արժէթիցիոց հետ (Պոն Դիքեյը) որք հանրային սնտուկներու կողմէ պիտի ընդունուին արող փոխարէն :

Այլ կարծուի թէ Բարձր Մեծ-Եպարքոսը պիտի վաւերացնէ սոյն որոշումը :

— Բերայի լաւատեղեակ ակմբոց մէջ զբոյց կայ թէ անգլիական կառավարութիւնն ինչ ինչ վերադաշնակներով ընդունելու է ֆրանսական կառավարութեան հակառակ ջարհներն ի մասին Եգիպտական ելեմտից կարգադրութեան :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Պատրիարքական Դեր. Տեղապահ Հօր պաշտօնն հաստատող և նոր Պատրիարքի ընտրութիւնն հրամայող «Պոյրուլթու»ն այս երեքշաբթի օր Բ. Դանէն հասաւ ի Պատրիարքարան :

«Պոյրուլթու»ն Մեծ-Եպարքոսական զիր մ'է , ուղղեալ «Առ Պատրիարքական Տեղապահ և առ Արօնական և Քաղաքական Ժողովը Հայոց Պատրիարքարանին» : Այլ յիշե-

ցնէ թէ Ներսէս Պատրիարքի վախճանման վրայ Պատրիարքարանի սոյն երկու ժողովներն զԳեր. Գէորգ Մ. Վ. Ռուսմուղլեան Պատրիարքական Տեղապահ կարգելով, նորա հաստատութիւնն և նոր Պատրիարքի ընտրութեան հրաման խնդրած էին Բ. Դուռնէն: Կը ծանուցանէ թէ Նախարարաց խորհուրդն հաւանելով, Վեհ. Սուլթանին Իրաքէին զիմած էր, որուն համեմատ, Գեր. Ռուսմուղլեան վարդապետին Տեղապահական պաշտօնը կը հաստատուի, և Պատրիարքարանին կը յանձնարարուի Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն կատարել նոր Պատրիարքին ընտրութիւնն, և արդիւնքը ծանուցանել Բ. Դուռնէն:

Այս Մեծ-Եպարքոսական պաշտօնադրէն զատ, կայ նաեւ Իստանբուլ Նախարարի Փոխանորդ Վսեմ. Քեամիլ փաշայի մէկ պաշտօնագիրն ուղղեալ անձնագէտ առ Գեր. Տեղապահ Հայրն, ում ծանուցանելով Կայսերական կառավարութեան որոշումը, կը հրաւիրէ զնա վարել Տեղապահական պաշտօնն և նոր Պատրիարքի ընտրութեան ձեռնարկել ըստ ազգային կանոնաց և հաստատեալ սովորութեանց:

Այս է Պատրիարքարան եկած պաշտօնագրոց պարունակութիւնն, որ նախընթաց օրինակներուն համաձայն է ճշդիւ:

«Պաշտօնութեան Պատրիարքարան բերաւ Կրօնային գործոց Տեսչութեան առաջին ղեկանապետն, հանդերձ ուրիշ պաշտօնատարով մը, և մատուցանելով Գեր. Տեղապահ Հօր, շնորհաւորեց նորա պաշտօնը: Նորին Գերապատուութիւն շնորհակալութիւն յայտնեց Կայսերական կառավարութեան, աղօթքներ ըրաւ վասն անդին կենաց Վեհ. Սուլթանին, և մեծարեց երկու պաշտօնատարներն: Սոցա մեկնելէն յետոյ, Պատրիարքարանի պաշտօնէտքը շնորհաւորեցին զՆորին Գերապատուութիւն:

— Վսեմ. Քեամիլ փաշան երկրորդ գիր մ'աւ ուղղած է առ Գեր. Տեղապահ Հայրն: Կը յիշուի թէ Վարչութիւնը Վեհ. Սուլթանին մատուցուելու համար ուղերձ մը ղրկած էր Բ. Դուռնէն, ազգային շնորհակալութիւն յայտնելով այն պատուոց համար զորս Կայսերական կառավարութիւնն հաճած էր ընել հողերոյս Պատրիարքին յուղարկուորութեան հանդիսին: Մեծ-Եպարքոսն յայնժամ խոստացած էր Վեհ. Սուլթանին մատուցանել զայս գիր:

Վսեմ. Քեամիլ փաշա իւր պաշտօնագրով «Կ'աւետէ» Գեր. Տեղապահ Հօր թէ Պատրիարքարանին ուղերձը մատուցուած է Վեհ. Սուլթանին, որ բարեհաճած է իւր բարձր զոհունակութիւնն յայտնել անոր մէջ պարունակեալ զբաղմանց համար:

— Այս չորեքշաբթի օր Քաղաքական

Ժողովը դումարեցաւ, ընդ ատենապետութեամբ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյի, եւ յետ քանի մը յարարերական և թաղային խնդրոց կարգադրութեան, հետեւեալ տնօրէնութիւններն ըրաւ:

Տեղապահական և Պատրիարքական Պաշտօնութեան կարգացուելէ յետոյ, Ժողովը ձեռնարկեց անմիջապէս, պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկը պատրաստելու, և որոշեց Եկեղեցական Համագումար Ժողովոյ ցանկին մէջ ի վերեւ նշանակեալ եկեղեցականաց հինգն ընտրել, անոնցմէ միայն այն է Իզմիրի Գեր. Առաջնորդին քաղաքական հանգամանքն ստուգելէ յետոյ:

Այս հինգ ընտրելիք են՝ Տ. Տ. Վեհապետեան, Իզմիրեան, Բարթողիմէոս, Նար-Պէյ և Խորէն Աշրգեան Սրբազաններն:

Ժողովը որոշեց ի պաշտօնէ գրել Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ Ատենապետին թէ՛ Պատրիարքական ընտրութիւն հրամայող Պաշտօնութեան եկած է, և թէ Քաղաքական Ժողովը պատրիարքական ընտրելեաց ցանկին սպարապետութեամբ զբաղած լինելով, Ազգային Ժողովը կրնայ դումարիլ յառաջիկայ շաբթուան ուրբաթ օրը:

Ազգ. ամսուայ միճակին մէջ դառնուած Ապարանից վանքը չրջակայ քրդերէն զրաւեալ լինելով, Ժողովը այս մասին հարկ եղած տնօրէնութիւնն ըրաւ ազգային սեփականութեանց իրաւունքը պահպանելու համար:

— Տիգրանակերտի Ազգային Վարչութիւնն հեռագրաւ կը ծանուցանէ թէ տեղւոյն ընդհանուր գատախաղը Թէրէքէի խնդրոց կը միջամտէ, հակառակ մինչեւ ցարգ հաստատեալ սովորութեանց:

Պատրիարքական Գեր. Տեղապահ Հայրը Քաղ. Ժողովոյ ուշադրութեան յանձնեց զայս խնդիր:

— Իզմիրի Էմբառեալ քաղաքին իւր յունուար 24 թուով կը ծանուցանէ թէ Արշալոյս Սրարատեանի Խմբադիր-Տնօրէնն արձակուել է բանտէն,

— Ըստ որոշման Կրօնական Ժողովոյ, Այն չրջաբերական հրահանգն որ պիտի ուղղուի գաւառական առաջնորդաց՝ խմբագրուած է, յորում ցոյց տրուած է թէ հողեհանդստեան պաշտօնն երբ և ինչպէս պէտք է կատարուի Եկեղեցեաց մէջ:

Նմանապէս Կրօնական Ժողովը գիր մը մ'ուղղած է Լիմիածնայ Ս. Սինդիկին, անոր կցելով Արեւելիայի թիւերն յորում նկարագրուած են հողերոյս Պատրիարքին մահուան առթիւ Ռուսոյի հայ եկեղեցեաց ոմանց մէջ կատարուած հողեհանդստեան արտասովոր արարողութիւններն, և ուշադրութիւն հրաւիրած է այս մասին:

ՎՍԵՄ. Կ. ՇԱՀՊԱՋ ԷԾԷՆՏԻԻ

Նախագահութեան ներքեւ

Յանձնաժողովոյ ջանիւք

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՊԱՐԱՀԱՆՈՒՄ

Դիմակաւոր և անդիմակ

Ի Նպատակ

ԱՐԱՄԵԱՆ ԵՐԿԱՅՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի Թատրոն Գաղկեդոնի

19 Յունիւլ, 1885, Շարաթ գիշեր ժամ 4

Մուտք 3 Մէճիւս

Անդամք Յանձնաժողովոյ

Վսեմ. Կ. Շահպաղ Էֆէնտի, Նախագահ
Մեծ. Միքայէլ Էֆ. Մամեան, Խորհուրդ

- | | |
|-------------|----------------------|
| » Յովհաննէս | » Կիւլպէնկեան, Գնչոյ |
| » Դրիզոր | » Զօհրապեան, Բրդու |
| » Անտոն | » Աղասեան |
| » Աւետիս | » Հարէնյ |
| » Դառնիկ | » Մարտիրոսեան |
| » Եղիա | » Պէյլէրեան |
| » Մելքոն | » Հալաճեան |
| » Միհրան | » Միքայէլեան |
| » Միսաք | » Թաշճեան |
| » Յովհաննէս | » Ղօնչէկիւլեան |
| » Յակոբ | » Սեյրաճեան |
| » Յակոբ | » Պէկեան |

Ա.Զ.Դ

Վսեմ. Տօթ. Ստեփան Կալա Աս-
լանեան իւր բնակարանը փոխադրած
է ի Գատրիքիւղ, Մօտա Ճատտէսի,
թիւ 101, և կը շարունակէ դարմա-
նելիքն զիմովները՝ թէ՛ անդ ասիւն օր,
և թէ՛ Պահճէ Գաբու Մէրհամէթճեան
դեղարանը՝ Երեւանի, Երեւանի, և
շաբաթ օրերն ի միջօրէի. — Աղքատ-
ները միշտ և ամենուրեք ձրի:

19-50

ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ

ՄԵՄԱՇՈՒՔ ՏԻԿԵՈՋՊԻ ԲԱԼԻՍԻ

ԱԻՍՏՐՈՅ-ՀՈՒՆԳԱՐԻՈՅԻՆ ՄԱՍՆՈՒՀԻՈՅԵ

ՊԱՐԱՀԱՆՈՒՄ

ԴԻՄԱԿԱԿՈՐ ԵՒ ԱՆԴԻՄԱԿ

ՏՈՒՆԱԼ ԲԵՐԱ, Ի ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

2/14 Փետրուար 1885

Ի ՆՊԱՍՏ

ՅԱԿՈԲԵԱՆ

ՁՐԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ՀԱՅՈՑ

Գործադիր Յանձնախումբ

- | | |
|----------------------------|-----------|
| Վսեմ. Գոմանտօր Ժ. ալ Թօրնի | Նախագահ |
| » Եալէր Կալա | Փոխ-Նախ. |
| Մեծ. Թ. Վ. Ամայթ | Գանձապետ |
| » Անտոն Ալիք Էֆէնտի | Բարոյաւոր |

Անդամք

- Վսեմ. Ապի Կէյ
- » Արիստակէս Էֆէնտի Աղաբեան
- » Գուլամեան Պետրոս Էֆէնտի
- Մեծ. Էստեան Մկրտիչ Էֆէնտի
- Վսեմ. Եֆէնտի Եֆէնտի
- » Եստեան Տիգրան Էֆէնտի
- Մեծ. Իւթիլճեան Կարապետ Էֆէնտի
- » Հաճիպար Գրիգոր Էֆէնտի
- » Ճիլճեան Տիգրան Էֆէնտի

- Վսեմ. Մարտիրոս Օննիկ Կէյ
- Մեծ. Նորատուրեան Արթին Էֆէնտի
- Վսեմ. Նուրեան Էֆէնտի
- Մեծ. Նուրիճան Տօթէօր
- » Պիլէգիճի Յովսէփ Էֆէնտի
- » Սամանճեան Գեորգ Էֆէնտի
- » Մ. Սէֆէլտէր Լ.
- » Աթէֆանովիչ Բ.

- Վսեմ. Աթրէքէր Կալա
- Մեծ. Աբախտիւ Ա.
- » Վուչիկո Նիկոլայ
- » Տօմանճէ Սեբէթի
- Վսեմ. Բօրթուղալ Միքայէլ Էֆէնտի
- Մեծ. Գաղանձալ Եֆէնտի

Սրտոնաստէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ